№ 185 ՈՒՐԲԱԹ 23 ՕԳՈՍՏՈՍԻ 1913 ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ ՈՒՐԲԱԹ 23 ՕԳՈՍՏՈՍԻ № 185

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կօպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԱԿԻ» խմբագրութիւնը խորին վշտով յայտնում է խմբագրութեան անդամ, լրագրի հրատարակիչ՝

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԳՍԵԱՆ ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆԻ

մահը, որը տեղի ունեցաւ երէկ, օգոստոսի 22-ին, երեկոյեան ժամը 5-ին, երկարատև հիւանդութիւնից յետոյ։ Հոգեհանգիստը այսօր հանգուցեալի բնակարանում, Օլգինսկայա 26, երեկոյեան ժամը 7-ին։

Թաղման մասին կը յայտարարվի առանձին։

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպ. Հոգաբարձութիւնը

սրանով յայտարարում է, որ դպրոցում նորեկ աշակերտների համար ազատ տեղեր կան Գ. պատր., I, II, IV և V դասարաններում։

Դպրոց մտնել ցանկացողները պէտք է ներկայացնեն վերատեսչի անունով խնդիր՝ կցելով ծննդեան (խսկական և ոչ քաղուածք), ծաղկի և ուսման վկայականները։

Գ. պատր. մտնել ցանկացողները պէտք է լինեն ոչ աւելի քան 12 տարեկան, I դաս. 13 տարեկան, II դաս. 14 տարեկան, IV դաս. 16 տարեկան և V դաս. 17 տարեկան։

Քննութիւնները և վերաքննութիւնները կը սկսվեն օգոստոսի 24-ին։

(16,18,21,23) առ. 645. 4—4

ՔԱՄՈՅԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԵՐԿԴԱՍԵԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Նորեկ աշակերտուհիների ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ և ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ սկսվելու են օգոստոսի 26-ից։

Ազատ տեղեր կան I, III, IV, V և VI բաժանմունքներում. ծխական դպրոցների աշակերտուհիները ընդունվում են առանց քննութեան, համաձայն իրանց աւարտական վկայականների։ Դպրոցը գտնվում է նախկին բնակարանում՝ Բրոսսէ տուպիկ № 8. (Броссе тупикъ № 8).

[illegible] 666. 3—2

Թիֆլիսի Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցում

առաջիկայ 1913—1914 ուսումն. տարվայ համար ընդունելութիւն կայ Ա, Բ, Գ և Դ. դասարաններում։

Խնդիրների հետ պէտք է ներկայացվի նաև ծննդեան վկայական կամ քաղուածք։ Խնդիրներն ընդունվում են մինչև օգոստոսի 25-ը։

Վերաքննութիւններն սկսվելու են օգոստոսի 26-ին, առաւօտեան 9 ժամին։ Նորեկների քննութիւններն սկսվելու են օգոստոսի 29-ին, առաւօտեան 9 ժամին։

Տեսուչ դպրոցի Ստ. Մալխասեան

առ. 678. 1—1

Առաջնակարգ մեծ ցիրկ ԵՂԲ. ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ

Միքայէլեան փողոց, Մուշտայիդ այգու մուտքի մօտ, սեփ. ամառային շինութիւն։

ԱՅՍՕՐ, ուրբաթ, օգոստոսի 23-ին, հսկայական ներկայացում—ՆՕՆ-ՊԼԻՒՍ-ՈՒԼՏՐԱ ընտրովի ծրագրով և բոլոր դերասանների և դերասանուհիների մասնակցութեամբ։ ԱՅՍՕՐ օդում թռչողներ «4 սատանան» ցիրկի գմբէթի տակ ցոյց կը տան մի շարք՝ տակաւին Թիֆլիսում չը տեսնված՝ ձևեր։ ԱՅՍՕՐ հանդէս է գալու Նիկօլինին, որ գլխիվայր կանգնէ ցիրկի միջով։ Հանդէս են գալու գեղեցկուհիներ Ռակսօս իրանց մարզված շների հետ։ Դուրս կը գայ ծիծաղաշարժ Ֆիգելին։ Նոյնպէս յայտնի ծաղրածու Րօբէրտօն իր ամենախելօք խոզուկի և մաթեմատիկոս շան հետ։ Մասնակցում են յայտնի երաժիշտներ Բրօկարը։ ԱՅՍՕՐ ակրօբատ խաղացի Դելլա-Կազօ ընտանիքը ցոյց կը տայ նորանոր վտանգաւոր գործողութիւններ։ Հանդէս են գալու ժողովրդին սիրելի կատակախօսներ եղբ. Վինչենցօները, նաև ուրիշ նշանաւոր խաղացողներ։ Ներկ. սկիզբն է եր. ժ. 8½-ին։

679. 1—1

Անդիժանի հայոց դպրոցի համար դասատուներ վարձված են արդէն։ Հրաւէր չը ստացողները ազատ են։

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

առ. 674. 1—1

ԲԺԻՇԿ

ԾՈՒԹՅԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ

Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը։

Հասցէն՝ Ռուիշչեվսկայա № 1.

առ. (ե.հ.կ.) 4. 100—92

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ

«Մշակի» խմբագրութիւնը անփոխարինելի կորուստ ունեցաւ։

Նրա խմբագրութեան անդամ և հրատարակիչ Յովհաննէս Տէր-Մարկոսեանը վախճանվեց ծանր հիւանդութիւնից յետոյ։

Յովհաննէս Տէր-Մարկոսեանը «Մշակի» ամենահին աշխատակիցներից մէկն էր, որ սկսել էր իր գործունէութիւնը «Մշակի» հրատարակութեան առաջին տարիներից Գրիգոր Արծրունու անմիջական ղեկավարութեան տակ։

Հաւատարիմ Գրիգոր Արծրունու պատգամներին, հանգուցեալ Յովհաննէս Տէր-Մարկոսեանը հաւատում էր «Մշակի» գաղափարական առաքելութեան գործին և գոհանում էր տեսնելով, թէ ինչպէս տասնեակ տարիներ առաջ հիմնադրված գործը գնում է հաստատ շաւղով, նուաճելով նորանոր խաւեր հայկական մասսայի խորքերում։

Յովհաննէս Տէր-Մարկոսեանը ուսել էր Ներսիսեան դպրոցում և յետոյ զարգացել ինքնակրթութեամբ թէ «Մշակի» մտաւոր մթնոլորտում և թէ ընթերցանութեան միջոցով, որին նա այնքան անձնատուր էր, կարդալով թէ հայերէն և ռուսերէն և թէ ֆրանսերէն լեզուներով բազմաթիւ երկասիրութիւններ։

Յովհաննէս Տէր-Մարկոսեանը Գրիգոր Արծրունու կենդանութեան ժամանակ մի երկու անգամ եղել է ժամանակաւոր խմբագիր Արծրունու բացակայութեան միջոցներին։ Նա ժամանակաւոր խմբագիր եղաւ նաև «Մշակի» այն մի քանի համարների, որոնք լոյս տեսան Գրիգոր Արծրունու մահից յետոյ։

Հանգուցեալը յայտնի էր իբրև անխոնջ աշխատող և արագ գործող։ Նա արել է բազմաթիւ թարգմանութիւններ, որոնք կարող էին ստուար հատորներ կազմել։

Վերջին տարիները նա թէ տկարութեան և թէ յոգնածութեան պատճառով թողել էր լրագրական ամենօրեայ աշխատանքը և տենչում էր վերակազդուրվելու, որպէս զի նորից դիմի աշխատանքի։ Բայց այդ նրան չէր վիճակված։

«Մշակի» խմբագրութիւնը համակված է խոր կսկիծով իր ընկերակցի և բարեկամի ծանր կորստի առիթով։

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

### ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 7 օգոստոս

Ռամազանը մուսուլմանութեան ամենանուիրական ու սուրբ ամիսն է։ Ինչ որ ալ լինի, ճշմարիտ մուսուլմանը պէտք է գէթ այդ ամսուն սուտ չխօսի և աշխարհային պիղծ գործերով չզբաղի, պայմանաւ սակայն, որ անոր ունէ գրգռիչ կամ արգելիչ պարագաներ չհանդիպին։ Եւ եթէ վերջին պարագան տեղի ունենայ, ան ալ հայու մը կողմէ, ա՛լ Աստուած օգնութեան գայ հայուն։

Եւ ահա՝ հայերու կողմէ գործուած անզգուշութեանց հետևանօք է, որ ամեն օր շուկայի մէջ և հրապարակի վրայ հայեր կը ծեծուին, կը թքուին և կը նախատուին չարաչար, պայմանաւ սակայն, որ պոռալ կանչելու և աղմուկ հանելու իրաւունք չունենան։ Եւ որ աւելի ցաւալին է, այդպիսի պարագաներու մէջ կատարուած ամեն բողոք և դժգոհութիւն ունէ մուսուլմանի դէմ՝ պաշտօնական ձևի չի մտներ և կը մնայ անհետևանք։

Եւ ահա անցեալները տեղւոյս շուկայի հրապարակին վրայ մէկ-երկու Թիւրքերու կողմէ յանիրաւի ծեծուեցան մեր վաճառականներէն [illegible] Քէչիշեան, ինչպէս և մսագործներ՝ Աղաջան, Սաղօ և Գասպար աղաները, առանց կարենալու նոյնիսկ բողոքել։

Այստեղ այնպիսի մարդիկ կան, որոնց դէմ ոչ միայն չես կարող բողոքել, այլ քեզ ծեծած ժամանակ իսկ՝ չես կարող ըսել, թէ «աղա, ինչո՞ւ կը զարնես». այլ խոհեմութիւնը կը ստիպէ քեզ՝ անոր քեզ ապտակած ժամանակ լռել և գլուխդ կախած՝ փախչիլ, որպէսզի անոր մարդիկը քեզ չհետապնդեն և չսպաննեն։

Այսպէս պատահեցաւ անցեալ օր, երբ Աւրանի նախկին ռէս Գրիգորի տղայ Մուշօն կը հանդիպի տեղւոյս երևելիներէն Ֆալամազ աղային, որ ռամազանի երկրորդ օրը ըլլալով կը հանդիպի այդ Մուշօյին, զոր շատոնց կը հետապնդէ եղեր։ Աղան իսկոյն, առանց խօսեցնել տալու, կը սկսի գաւազանով և ձեռքերով հարուածել։ Մուշօն իր ազատումը կը գտնէ միմիայն փախուստի մէջ։

Այդ քստմնեցուցիչ դէպքին ներկայ կըլլան 2—3 մշեցի ծանօթ հայեր, համագիւղացի հայ մը, և սակայն ոչ մէկը կը համարձակի վկայ կանգնիլ, որպէս զի մարդը կարենար արդուհալով մը բողոքել կառավարութեան։ Մուշօյին կը մնայ շուտով անհետանալ քաղաքէն, որովհետև Ֆալամազ աղայի մարդիկ սկսած էին հետապնդել Մուշօն՝ սպաննելու կամ աւելի չարաչար ծեծելու։

Մեր քաղաքի Թիւրքերը հիմա բաւականին դիւանագէտ են դարձեր։ Եթէ մէկը իրենց խիստ կերպով չդիմադրէ, չեն սպաններ զայն, այլ չարաչար ծեծի կենթարկեն։

Ռամազան ամսուն Թիւրքահայաստանի քրիստոնեայ ազգաբնակութիւնը, ի յարգանս Թիւրք հայրենակիցներուն, ստիպուած է հրապարակաւ չճաշել շուկայի մէջ. մանաւանդ յայտնի աղաներու առջև բաց-համարձակ ծխելը անպատկառ համարձակութիւն է։ Նոյնիսկ եթէ աղան քեզ թոյլատրէ, թէ ծխէ, բայց դու ի ներքուստ պիտի գիտնաս անոր վեհութիւնը և անոր բարձր ներկայութեան չծխես։

Անցեալներն այդ կերպ անպատկառ անխոհեմութեան մէջ գտնուեր է Հ.Մ. Զաղացպանեան կամ Դանիէլեան անունով վերի-թաղեցի քիչ համարձակ մէկը, որ սիգարը բերանին կը մտնէ սրճարան մը, ուր այդ րոպէին նստած են եղեր տեղւոյս Թիւրք երևելինե- [illegible] լով Հմայեակին այսպէս համարձակ և անպատկառ սիգար ծխելը իրենց ներկայութեան՝ այլ ևս խաչէն ու Աւետարանէն կառնեն և կերթան մինչև ծայրը և կը հրամայեն այդտեղի իրենց հետևորդներուն, որ այդ յանդուգն հայը ոտքի տակ առնեն։ Զմոռնանք յայտնելու, որ այդ երկու երևելիները մեր քաղաքին ամենէն լաւագոյն պետերն են։ Բարեբաղդաբար մէկ երկու փօլիս վրայ կը հասնին և Հմայեակը դուրս կը ձգեն սրճարանէն, և գործը կը վերջանայ խաղաղութեամբ։

Այս տեսակ մանր խեղդիչ, սպաննիչ դէպքերը ամենօրեայ են այս տարաբաղդ երկրին մէջ։ Բայց որու՛ լսես, որու՛ հասկցնես, երբ դրութիւնը երևութապէս խաղաղ է, երբ երկրի մէջ զինուորեալ կառավարութիւն կայ և ոստիկանները գիշեր ցերեկ կը հսկեն քաղաքին ամեն անկիւնները։ Աւելի զարմանալին և ցաւալին այն է, որ այս կեղծ և սպաննիչ խաղաղութեամբ աւելի կը խաբուին թէ խաբուիլ կուզեն եւրոպացիք։

Թախիծ

# ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

### ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 օգոստոսի

Սօֆիա.—Գեներալ Սավօվը և Տօնէվը խորհրդական նշանակված երկու պօդպօլկօվնիկների հետ միասին գնացին Կ. Պօլիս։ Նաչէվիչը կը մնայ պատգամաւորութեանը յետոյ։

Թիւրքերը գրաւեցին Սօֆլուն։ Գիւմիւլջինան գրաւված է կանոնաւոր զօրքերով։ Շրջակայքում կողոպուտներ են անում աւազակախմբերը։ Հետևակների մի զօրամաս և մի հեծելագունդ գրաւեց Կսանտին, որի քաղաքապահ զօրքը, ստացված հրամանի համաձայն, յետ քաշվեց Գեօկչի-բունարի վրայով դէպի Էլմալը գիւղը։ Դէդէաղաջի մասին տեղեկութիւններ չը կան։

—

Կ. Պօլիս.—Բօլգարիայի հետ բանակցութիւններ վարելու համար նշանակված թիւրքական պատգամաւորութեան մէջն է նաև Իզզէթ-փաշան։

—

Կ. Պօլիս.—Յատուկ գնացքով Ադրիանուպօլսից այստեղ եկաւ բօլգարական պատգամաւորութիւնը։

—

Աթէնք.—Երէկ լուր տարածվեց, որ երբ Թիւրքերը գրաւեցին Դէդէաղաջը և ջրասոյզ արին յունական «Սպէցա» յածանաւը։ Արդարև երեք օր առաջ թիւրքական նաւերը մօտեցան Դէդէաղաջին, բայց նկատելով յունական նաւերի ներկայութիւնը հեռացան նորից։

Յունաստանը դիմեց պետութիւններին՝ խնդրելով կարգաւորել Դէդէաղաջի գրաւման հարցը՝ նկատի առնելով դրված ժամանակամիջոցի լրանալը։

—

Բէլգրադ. — Մեծ պետութիւնների ներկայացուցիչները դիմեցին արտաքին գործերի մինիստրին՝ խնդրելով թոյլ տալ Ալբանիայի սահմանագլխի բնակիչներին ազատօրէն գնալու Դիբրի և Դեակօվիցայի շուկաները։ Մինիստրը պատասխանեց, որ Սերբիան արգելքներ չի դնի, եթէ բնակիչները հետևեն սերբիական օրէնքներին։

Սերբ-չերնօգօրական բանակցութիւնները՝ սահմանը որոշելու համար՝ ընդհատվել են տարաձայնութեան պատճառով։ Չերնօգօրական պատուիրակը մեկնեց։ Սպասվում է յունաց թագաւորի միջնորդութիւնը։

—

Սօֆիա.—Բօլգարական և ռումինական կառավարութիւնները համաձայնվեցին, որ բօլգար ազգաբնակութեան կրած վնասները ռումինական զօրքերից՝ կը հաշւեն տեղական խառը յանձնաժողովները։ Տարաձայնութեան դէպքում հարցը վերջնականապէս կը լուծի բօլգարական և ռումինական կառավարութիւնների պատգամաւորներից և տեղական իշխանութիւններից կազմված բարձր յանձնաժողովը։

### ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԷՊՔԵՐԸ

(ԼՐԱԲԵՐԻ ՄԸ ՑՈՒՑԱԾՆԵՐԸ)

—о—

Կ. Պոլիս, 10 օգոստոս

Թիւրք բանակը այլևս յայտնի կերպով ինքզինքը կանջատէ օսմանեան կառավարութենէն և ինքնագլուխ ու Բ. Դրան դէմ կը գործէ, փութացնելով բաժանումը այս երկրին։

Յուլիս 19-ին Բ. Դուռը, ինչպէս կը յիշուի, Եւրոպայի ծանուցագիր մը տալով Կ. Պոլսոյ ապահովութեան համար Միդիա-Էնոս գիծէն աւելի ապահով գիծ մը՝ Մարիցայի գիծը ձեռք բերելու անհրաժեշտութիւնը ցոյց տուաւ և այս հիման վրայ առիթէն օգուտ քաղելով իր բանակը մղեց առաջ։ Այս պատրուակով գրաւուեցան մինչև Մարիցա եղած բոլոր երկիրները։ Բ. Դրան եղած եւրոպական բարեկամական թելադրութեանց և ազդարարութեանց անիկա շարունակ միևնոյն պատասխանը տուաւ, թէ Էդիրնէն գրաւած էր անհրաժեշտութեան մը հարկին տակ և առանց Էդիրնէի Կ. Պոլիս վտանգուած է այլևս։

Եւրոպա այս պատրուակները լսելու տրամադիր չըլլալով հանդերձ գոնէ մասամբ պարտաւորուած կը լսէ այդ առարկութիւնները։

Բ. Դուռը Միդիա-Էնոս գիծին չվերադառնալու ուրիշ պատճառ մըն ալ ցոյց կուտար բանակին գրգռութիւնը և երիտասարդ Թիւրք վարչութեան անխուսափելի անկումը, առարկելով թէ Էդիրնէի գրա- [illegible] բանակին անզսպելի զգացումներուն։ «Բանակին տրուած ետ դառնալու հրաւէր մը անլսելի պիտի մնայ», կըսէին։

Այս պատճառաբանութիւնը բնական է թէ շատ ծիծաղելի դիրքի մը կենթարկէր Բ. Դուռը և շատ գէշ գաղափար մը կուտար Թիւրքիոյ վիճակին վրայ, քանի որ անիկա ներքին կազմալուծման մը առաջին ազդանշանը կրնար համարուիլ։

Բանակը անհնազանդ էր ուրեմն Բ. Դրան, և անիկա պետութեան մէջ ունէ բանականութեան ու տրամաբանութեան չհնազանդող ոյժի մը գոյութիւնը կենթադրէր։

Սակայն Բ. Դրան այս առարկութիւնը թերևս մինչև հիմա շատերու կողմէն «ձևական» կը համարուէր, կամ ուրիշ կերպով մը խօսելով՝ «կեղծիք մը», «խօսելու եղանակ մը»։ Սակայն դժբաղդաբար հիմա իրողութիւնը կուգայ հաստատել, թէ Բ. Դրան յայտարարութիւնները ճիշդ ու իրական էին, և բանակը Բ. Դուռնէն անկախ կը գործէ։

Ասով միայն կրնան մեկնուիլ մէկ երկու օրէ ի վեր բանակէն հասած լուրերը։ Ամբողջ Եւրոպայի ընդհանուր դժգոհութիւնը յայտնի կերպով արտայայտուելէն և այս առթիւ ռուսական պատերազմի մը զրոյցները օրուան հարց դարձած մէկ պահուն, կը լսուի թէ Թիւրք բանակը Մարիցայի գիծով ալ չբաւականանալով՝ անցած է զայն և հելլէն բանակին կողմէ պարպուած անդր-Մարիցա գտնուած քաղաքները կը գրաւէ։ Ասիկա քաղաքական նոր մէկ մեծ անխոհեմութիւն է, որ Թիւրք բանակը կը գործէ Բ. Դուռն ալ խոշոր հակասութեան մը մէջ ձգելով, վասնզի յուլիս 19-ի զեկուցագրով անիկա յանձնառութիւն յայտնած էր Մարիցայէն անդին չանցնիլ և այսօր կանցնի։

Բ. Դուռը, խորհելով թէ այս յանդգնութիւնը անպատիժ չի կրնար մնալ, կը հաւաստէ եւրոպական կառավարութիւնները, թէ Մարիցայէն անդին գրաւուած երկիրները պիտի պարպէ անմիջապէս և զանոնք պահելու միտք չունի։

Այս խոստումը քանի որ անմիջապէս չի կրնար գործադրել, և քանի որ ասկէ առաջ իր տուած խոստումներն ալ չէ յարգած, բնական է թէ Եւրոպա չպիտի ուզէ հաւատք ընծայել ու վստահիլ Թիւրքիոյ յանձնառութեան, մանաւանդ Բ. Դրան խօսքերուն, որուն որքան անարժէք ըլլալը հաստատուած է այս պարագային, բանակին յայտնի ըմբոստութեան բերմամբ։

Արդարև հիմա Թիւրքիան կը գտնուի անսովոր վիճակի մը մէջ։ Իսլամ մեծամասնութիւն մը կայ, որ գիտէ թէ իրենց այս յանդգնութիւնները անպատիժ չպիտի մնան։

Իսկ իթթիհատական մասը կը յուսայ առիթէն և պատեհութենէն օգտուիլ և յաջողիլ մնալ Եդիրնէի մէջ, միայն ու միայն օգտուելով եւրոպական աններդաշնակութենէն։

Ելեւմտական այն անձկութիւնը, որուն մէջ կը տապլտկի պարզապէս պետութիւնը, և այն հարկեցուցիչ պահանջը, որ՝ Եդիրնէի գրաւման հետեւանօք՝ Թիւրքիա պիտի հարկադրուի պահել տակաւին երկար ատեն 200,000 հոգինոց բազմաթիւ բանակ մը, տեսակ մը անել է պետութեան համար և աղետ մը, որ բովանդակ պետութեան կը սպառնայ, մինչ Եդիրնէ անոր շատ չնչին ու աննշանակ մասը կը կազմէ։

Եդիրնէ ուրեմն կը սպառնայ կործանել այս պետութիւնը, և այս ահաւոր պատասխանատուութենէն չեն վախնար երիտասարդ Թիւրք վարիչները։

Հայորդի

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 օգոստոսի

Տօկիօ.—Օպպօզիցիայի 20 ականաւոր քաղաքական գործիչներ սկսել են ագիտացիա մղել կաբինէտի, մանաւանդ Չինաստանում գտնվող դիպլօմատիայի դէմ։

—

Դուբլին.— Փողոցային անկարգութիւնների ժամանակ վիրավել են 697 մասնաւոր անձեր և 45 ոստիկաններ։ Բացի հիւանդանոցում մեռած երկու հոգուց և փողոցում սպանված մէկից, քանդված տների փլատակների տակ գտել են 8 դիակ։ Պակասում են 50 տնուորներ։

—

Լոնդոն.—Ոստիկանութիւնը դատարան բերեց ստորերկրեայ էլեքտրական երկաթուղագծի կայարանում երէկ երեկոյեան կալանաւորված ակնավաճառ 4 հրէայ մակլէրներին, որոնցից երկուսը անգլիահպատակ են, իսկ երկուսը աւստրիահպատակ։ Կալանաւորված է նաև 1 անգլիացի։ Դրանք բոլոր էլ մեղադրվում են իբրև մեղսակիցներ պօստում կորած 130,000 ֆունտ ստերլինգ արժեցող մարգարտեայ ապարանջանի գողութեան։ Կալանաւորվածների մօտ գտել են այդ միևնոյն ապարանջանի մարգարիտներից խոշոր գումարի։ Այդ գործի դատաստանական քննութիւնը յետաձգված է մի շաբաթով։ Կալանաւորվածների խնդիրքը՝ ազատել իրանց երաշխաւորութեամբ՝ մերժված է։

—

Լոնդոն.—Հաղորդում են, որ Դուբլինում նոր անկարգութիւններ են տեղի ունեցել. երեկոյեան բազմաթիւ ամբոխը յարձակվեց ոստիկանութեան վրա քարերով։ Ոստիկանութիւնը պաշտպանվում էր կոպալներով։ Կան 100-ից աւելի վիրաւորվածներ։

—

[illegible] երկու տուն։ Փլատակների տակ թաղված են 13 ընտանիքներ, 4 հոգի սպանված են։

—

Բարրօաիլենդ.—Վիկկերսը ջուր իջեցրեց Թիւրքական առաջին դրէդնօուտ «Օրէշադիէն», որը անգլիական նաւաշինարաններում մինչև այժմ կառուցվածների մէջ ամենաուժեղն է համարվում։ Երկարութիւնն է 525, լայնութիւնը 91 ֆուտ, 23,000 տոնն տարածութիւն, 31,000 ոյժի տուրբին մեքենաներով, սպառազինված է 10 հատ $13^{1}/_{2}$ դիւյմի և 5 աշտարակների վրա էլ 16 հատ 6 դիւյմանոց թընդանօթներով։

—

Հէլսինգֆորս.—Ուլէաբորգի մօտ կողոպտիչները կողոպտեցին Ալատեմմէսի պօստային բաժանմունքը, սպանեցին կառավարչին և նրա 15 տարեկան աղջկանը ու անյայտացան։

—

Կիէվ.—Մեծ Իշխաններ Դիմիտրի Պաւլօվիչի և Գաւրիիլ Կոնստանտինօվիչի ներկայութեամբ տեղի ունեցաւ ռուսական առաջին օլիմպիական խաղերի հանդիսաւոր բացումը։ Մրցութեանը մասնակցում են 700 հոգի. կան մեծ քանակութեամբ օֆիցերներ, նաև մի քանի կանայք։

—

Հաագա.—Բացվեց պարլամենտական կօնֆերէնցիան։ Նախագահ է ընտրված նիդերլանդական խմբակի անդամ Տէդեմանը։

—

Մադրիդ.—Թագաւորը ներումն շնորհեց մահվան դատապարտված վեց հոգու, որոնց թւումն է թագաւորի կեանքի դէմ մահափորձ անող Սանչէ-Սալլիգրէն։

## ԼՈՒՐԵՐ ԹԱՒՐԻԶԻՑ

—

Թաւրիզ, 17 օգոստ.

◆ Ամսիս 14-ին Էջմիածնից հեռագիր ստացվեց, որ առաջնորդ Մելիք-Թանգեանը Վեհի հրամանով պարտաւորվում է ամսիս 20-ին լինել Էջմիածնում։

Փոխանորդ քահանան Վեհի հրամանը հեռագրով յայտնեց առաջնորդին Խոյ և Սալմաստ, ուր ճամբորդելու գնացել է թեմակալը։

◆ Մայիսի 23-ից ցարդ Թաւրիզում դեգերող քէյվանցի հայերն իրանց քահանայով մնում են վիզները ծուռ, և ամբողջ Թաւրիզում չը կայ մի մարդ, որ օգնութեան հասնէ այդ թշուառներին։ Առաջնորդ Մելիք-Թանգեանը ստիպողական հեռագրով մայիսի սկիզբներից նրանց Թաւրիզ բերելով՝ նրանց գործը ոչինչով չը կարողացաւ պսակել աջողութեամբ, և լաւագոյն ելքը գտաւ իր օձիքն ազատել նրանցից։ Ա-[illegible] վրդի վէրքերն ամոքելու», մինչդեռ Ղարադաղի գաւառի քանդված շրջանի ներկայացուցիչները կարօտում են այստեղ առաջնորդի աջակցութեանը։

Շահեան

## ԻՍԼԱՄԸ ԵՒ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆԸ

II

Հարկ կա՞յ արդեօք վերը յիշած չորս հարցերից առաջինին պատասխանելու։ Արդեօք Թիւրքիան՝ ինքը դարերի պատմութեամբ ամենալաւ և պերճախօս պատասխանը չը՞ տուել, և այն՝ գործնականապէս, որը ազգերի պատմութեան էն արիւնոտ էջն է կազմում։

Ամփոփենք այդ պատմութիւնը։

Թիւրքիան ուր որ դրել է իր ոտքը, այնտեղ կեանքը մեռել է, կանգ է առել մարդու հոգու ու մտքի գործունէութիւնը, Թուրքը. չինական պարիսպ է կանգնել առողջամտութեան, քաղաքակրթութեան ընթացքի առաջ, սառել է մարդու եռանդը, նոյն իսկ ապրելու ցանկութիւնը, շէն ու ծաղկած վայրերը վեր են ածվել մի ընդարձակ գերեզմանի՝ լի կենդանի դիակներով, ինչպէս մի սիրուն արտ, որի վրայով մարախն ու դաշտային մկներն են անցել, ինչպէս կենսատու երկիր, որին ժանտախտն է այցելել։

Սա Թիւրքիայի պատմութեան մի էջն է։ Դարձնենք միւս երեսը։

Առաջնի հակառակ՝ ուր որ նա դրել է իր ոտքը, քաջալերվել է աւազակութիւնը, ոճրագործութիւնը, ալան-թալանը, կաշառը, բռնութիւնը, հալածանքը։ Այսպիսով՝ եթէ հպատակների մի մասը դարձել է կենդանի դիակ, միւս մասը դարձել է անյագ բորենի՝ օսմանեան պետութիւն կոչված գերեզմանոցում, բայց կոչված կենդանի դիակների շուրջը։

Սրանք անհերքելի փաստեր են, պատմութեան էջերից չանհետացող փաստեր։

Ուրեմն առանց մարգարէ լինելու կարելի է գուշակել, որ եթէ համիսլամութեան գաղափարը իրականութիւն ստանայ, և այն՝ Թիւրքիայի գլխաւորութեամբ, այն հետեւանքը կը ստացվի, որ Թիւրքիա կոչված գերեզմանոցի սահմանը կընդարձակվի և մի կողմից՝ կենդանի դիակների, միւս կողմից՝ մարդակեր բորենիների թիւը կը տասնապատկվի։

Ուրիշ լաւ հետեւանք սպասել կարելի չէ։

Թիւրքիան նման է այն գազաններին, որոնց զսպում է գառագեղը, որոնք իրանց ժանիքները թաքցնելով՝ կծկվում, գալարվում, սողում են ի տես չխկացած երկաթի միայն։

Բաւական է, որ խորտակվի գառագեղը, վերանայ չխկացած երկաթը և գազանը ինքն իրան ազատ զգայ, նա անմիջապէս կը վերադառնայ իր գազանութեան, իր վայրենութեան։

Ո՞վ չէ յիշում Թիւրքիայի երէկվայ գալարումները, կծկումը, սողոսկումը բալկանեան դաշնակիցների առաջ և նրա սարսռամորտանքները եւրոպական դիւանագիտութեան հանդէպ։

Զարմանալի էլ չի լինի, եթէ գտնված լինեն այնպիսի միամիտներ, որոնք կարծած լինեն, թէ Թիւրքիան խելքի է եկել, թէ այլ ևս նրա պետութեան մէջ չեն կրկնվի նախկին արհաւիրքները, թէ գառն ու գայլը կապրեն ու կարածեն միասին…

Բայց նորագոյն փաստը՝ հազարումի երրորդ անգամը լինելով՝ եկաւ միամիտներին ապացուցելու, որ Թիւրքիան է և կը մնայ նոյնը, ինչ որ եղել է իր գոյութեան սկզբից ի վեր, որ նա կարող է իր մորթու [illegible]։

Ապացոյցը ամենքիս աչքի առաջն է. օրն օրին կարդում ենք Թիւրքերի գործած նորագոյն ջարդերի, ալան-թալանի մասին Րօդօստօյում, Մալղարայում և այլ հեռուներում, ուր կրկին ոտք են դրել նրանք, ուր կրկին հասել է նրանց ոճրագործ, արիւնաթաթախ ձեռքը։

Քանի որ այս այսպէս է, մնում է մեզ իմանալ, թէ արտաքին պայմանները որքան նպաստաւոր կամ աննպաստ են համիսլամական գաղափարի իրականացման համար։

Ա. Ց. Մուրադեան

Սամարղանդ

## ԹԻՐՔԱՀԱՅՈՑ ԲՈՂՋԱՆՔՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԱՏՈՒՑԱՆԵԼԻ

—

Ազգ. ժողովի վերջին նիստին մէջ կարդացուեցաւ վերջապէս այն գիրը, որուն մէջ կը բովանդակուէին Թիւրքահայոց բաղձանքները… Իզմիրլեան Կաթողիկոսին ներկայացուելիք։

Ահաւասիկ այդ բաղձանքագիրը, որ այժմ պիտի մատուցուի Տ. Տ. Գէորգ Ե. Վեհափառ Կաթողիկոսին.

1. Ընդհանուր ժողով.—Հոգեւորականներէ ու աշխարհականներէ կազմուած ընդհանուր ժողովի մը գումարումի պէտքը ի ս. Էջմիածին կամ այլուր՝ ուր որ պատշաճ դատուի, Վեհ. Կաթողիկոսի հայրապետութեան 2-րդ կամ 3-րդ տարին։

2. Հայրապետական այցելութիւն.—Ամենայն Հայոց Հայրապետը չփակուի միմիայն Ռուսաստանի մէջ, այլ որպէս հովուապետ պէտք եղած ժամանակ կարենայ այցելել ի Թիւրքիա, Պարսկաստան, և աշխարհի այն բոլոր կողմերը, ուր հոծ հայութիւն մը կայ։ Այսպէս եղած է Հայաստանեայց Եկեղեցիին սովորութիւնը ի հընումն։

3. Կապերու սերտումն. — Ամրապնդել այլ և այլ երկիրներու և պետութեանց մէջ գտնուող հայ եկեղեցիին զաւակներուն մէջ եղած կրօնական կապերը՝ նախաձեռնութեամբ Ս. Հայրապետին։

4. Սինոդի կազմակերպութիւն. — Էջմիածնի սինոդը, իբրև ամենայն հայոց հոգեւորական գերագոյն ժողով, պէտք է բաղկանայ եպիսկոպոսներէ ու վարդապետներէ, ինչպէս է այժմ։ Բայց այսուհետեւ առաւելութիւն տրուի անոնց, որ առաջնորդական պաշտօնով գոնէ երեք տարի գտնուած են այլ և այլ թեմերու մէջ և որոշ արժանիք ցոյց տուած։

5. Յարաբերութեանց կապեր կաթողիկոսներու մէջ. — Գտնել յարաբերութեանց այնպիսի կապեր, որոնցմով կարելի ըլլայ պահել Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան միութիւնը և Սիսի ու Աղթամարայ աթոռներուն կաթողիկոսութեան ուրոյն գոյութիւնը։ Այս երկու կաթողիկոսութիւնները մասնակցին Ընդհանրական Կաթողիկոսի ընտրութեանը ու, իբրև թեմեր, իրենց ձայնը ունենան ընդհանրական ժողովներուն մէջ, յարգելով Մայր Աթոռի գահերէցութիւնը։ Այդ յարաբերութեանց հարցի մասին՝ ազգ. երեսփոխանական ժողովը հարկ եղած ծրագիրը ուսումնասիրէ և Ս. Հայրապետին, հաղորդելով, գայ համաձայնութեան ու կարգադրութեան։

6. Ամուսնալուծութիւն. — Թէև հոգելոյս կաթողիկոսը կարգ մը ամուսնալուծութիւններ հրամայած է՝ ցոյց տալով թէ իր հայրապետական անձնական ըմբռնումը հաշտ էր անոր գործադրութեանն ու օրինաւորութեանը, բայց չը բաւեր ատ, և որպէս զի կամայականութենէ ազատուի, պէտք է գործադրուի իբրև սկզբունք։ Ուրեմն՝ լաւ է որ [illegible] նոր գործադրութեան անհրաժեշտ պայմանները, ու խմբագրուած, հաստատուած ամուսնական օրէնքի մը համեմատ իրաւունք տրուի ամեն թեմերու միևնոյն ուղղութեամբ վճիռներ տալ։

7. Ճիւղահամար. — Երջանկայիշատակ Խրիմեան Հայրիկ ամուսնական ճիւղահամարը թեթեւցուց կարելի եղած չափով մը, ազգակցական կապը որ 7 էր՝ 6-ի էջեցուց գործնականի մէջ, խնամութիւնը՝ 6-էն 5-ի, նոյնպէս կնքահայրութիւնը։

Խնդրել Ս. Հայրապետէն, որ երբ կանոն ընդունուին այս աստիճանները ժամանակին պահանջները նկատի առնելով և միշտ յառաջադիմական ոգի ցոյց տրուի հարկ տեսնուած բանաւոր պայմաններու մէջ։

8. Քահանայութիւն. — Կարելի եղածին չափ ուժ տալ քահանայութեան բարձրացման՝ սահմանելով կրթական և բարոյական վիճակներ, որպէս զի կեանքի թափթփուքներ, անկարողներ իրաւունք չունենան այս միջոցներով ձեռնադրութեան կոչուիլ և հոգեւորական սուրբ պաշտօնը ընել սոսկ ապրուստի միջոց։

9. Տարեկան համարատուութիւն.—Ամեն տարեգլուխ, առանձին տետրակներով, հրատարակուի մայրավանքին տեղեկագիրը, ուր իբրև թէ պատկերի մը մէջ տեսնուին՝

ա. Ծախքերը իրենց գլխաւոր բաժանումներովը.

բ. Եկամուտները իրենց գլխաւոր պայմաններովը.

գ. Հողային հասոյթները.

դ. Բարոյական ու տնտեսական բարեկարգութիւնները։

10. Սինոդի նախագահը.—Ս. Հայրապետը երբ ծերութեան պատճառաւ մը պէտք եղածին պէս գործելու անկարողութեան դատապարտուի, սինոդի նախագահը գործէ յանուն կաթողիկոսի՝ գործակցութեամբ սինոդի, տրուած վճիռները միշտ կրեն Ս. Հայրապետի կնիքն և ստորագրութիւնը։

11. Աշխարհական խորհրդական մասնախումբ.—Ս. Հայրապետը, իր կաթողիկոսական առաջին տարիէն, ունենայ աշխարհական խորհրդական մասնախումբ մը, բաղկացած մասնագէտ իրաւաբաններէ, տեղական լեզուին հետ։

12. Եպիսկոպոսական ձեռնադրութիւն.—Գէորգ Դ. կաթողիկոսի հաստատած կանոնի մը համեմատ, եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանան գլխաւորաբար այն վարդապետները, որոնք 3—7 տարի առաջնորդութիւն ըրած են, արդիւնք ցոյց տուած ու գնահատուած են իրենց ժողովուրդէն, սիրուած իրենց պարկեշտութիւնովը, անկաշառ և անաչառ ճանչցուած։ («Ժամանակ»)

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՑ

III

Ինչ ասել կուզի, որ «Համառուսական առողջապահական ցուցահանդէսում» ալկոհոլը պէտք էր ռուսական ցաւալի իրականութեան համար իր առաջնակարգ տեղը գրաւէր։ Կարծես մի չար աներեւոյթ ձեռք այդ երիտասարդ ազգի զաւակների միս ու արեան մէջ մտցրել է ալկոհոլի երկրպագութեան հոգին։ Բոլորը վարակված են այդ ախտով։ Բագոսին մոլեռանդ երկրպագու է ոչ միայն աշխատաւորը, գիւղացին, զինուորը և այլն, այլ և նոյն իսկ ինտելիգենտ տարրը, աշակերտութիւնը, կանայք։ Ակամայից այստեղ յիշեցի Տօլստոյի լեգենդաներից մէկը՝ ալկոհոլի վերաբերմամբ՝ իբրև աղբիւր բոլոր չարեաց։

«Չարը նախանձելով բառիս բուն նշանակութեամբ մաքուր և ամբիծ վանականի կենցաղի վրայ, մի օր թռչունի կերպարանքով ներս է մտնում վանականի խուցի լուսամուտներից այն ժամանակ, երբ նա ս. Գիրք կարդալով էր զբաղված։ Չարը վանականին առաջարկում է 3 պայման, որից մէկնումէկը անպայման պէտք է կատարէր. ա) կամ մարդասպանութիւն գործել, բ) հասարակաց տուն գնալ և վերջապէս գ) կամ թէ չէ, իր խցումը խմել։ Վանականի համար ի հարկէ սոսկալի էին 3 պայմանները։ Երկար մտատանջութիւնից յետոյ վանականը վճռեց չարեաց փոքրագոյնը ընտրել՝ իր խուցում մի փոքր խմել և չարը խափանել։ Ի՞նչ է դուրս գալիս.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱՒԳՈՒՍՏ ԲԷԲԷԼ

(1840—1913)

—

Շվէյցարական հողի վրա, Գրիզօնի կանտօնի Պասսուգ կոչված վայրում, ներկայ օգոստոսի 13-ին (ն. տ.) կնքեց իր մահկանացուն գերմանական սօցիալ-դեմօկրատիայի յայտնի լիդէր՝ Աւգուստ Բէբէլը 73 տարեկան հասակում։

Երկու շաբաթից ի վեր նա եկել էր Շվէյցարիա բուժվելու, որովհետև վերջին ժամանակներս նա տառապում էր լեղիի քարերից։ Առաջին շաբաթվայ ընթացքում նրա բուժման գործը բաւական լաւ է ընթանում, մինչ այն աստիճանի, որ նա իրան համարեա ապաքինված է զգում։ Սակայն երկրորդ շաբաթը նրա համար ճակատագրական է դառնում. սիրտն սկսում է թոյլ գործել, շնչառութիւնը դժուարանալ, և նա ստիպված է լինում անկողին մտնել։ Մահվանից մի օր առաջ, թէև խիստ թոյլ, կարողանում է կատարել մի զբօսանք, իր վերջին զբօսանքը, և ուժահատ դրութեամբ տուն վերադառնալիս արտայայտում է իր մերձաւորներին իր մահվան խիստ մօտիկ լինելու նախազգացումը, խորը ցաւ յայտնելով որ չէ կարողանալու աւարտել իր «Յիշողութիւնների» երրորդ հատորը*)։ Եւ իրօք, հետեւեալ առաւօտ իսկ, իր մերձաւորների համար միանգամայն անսպասելի կերպով, փակում է իր աչքերը յաւիտենապէս։ Իր կտակի համաձայն՝ հանգուցեալի մարմինը բերում են Ցիւրիխ այրելու և աճիւնը դնելու Բէբէլի ընտանիքի տապանատունը։ Նոյն քաղաքումն է ապրում նաև հանգուցեալի ամուսնացած դուստրը, այժմ այրիացած տիկին Սիմօն-Բէբէլը, որի ամուսինը, յայտնի դօքտոր Սիմօնը, Ցիւրիխում տարիներ առաջ թունաւորվել է կանսերի վրա արած ուսումնասիրութիւնների միջոցին։

Այս մեծ սօցիալիստի մահվան լուրը, որ կայծակի արագութեամբ տարածվեց աշխարհի բոլոր ծայրերը, անշուշտ խորը վիշտ, ծանր հարուած և անփոխարինելի կորուստ պատճառեց ընդհանրապէս միջազգային պրօլետարիատին և առանձնապէս գերմանական բանւորական կազմակերպութեանը, որի համար հանգուցեալը և հիմնադիր էր, և բարեխնամ խորհրդատու հայր և անփոխարինելի ընկեր։ Ուստի, ամենուրեք, ուր գոյութիւն ունեն բանւորական-սօցիալիստական կազմակերպութիւններ, սինդիկատներ ու միութիւններ, կատարվեցին բազմամարդ սգահանդէսներ ու միտինգներ մեծ ուսուցչի յիշատակին, ամեն կողմից ցաւակցական վշտալից հեռագրեր թափելով Ցիւրիխ, ուր հաւաքվել էին միջազգային պրօլետարիատի ներկայացուցիչները, բազմաթիւ սօցիալիստներ և յարգողների անհամար բազմութիւն իրանց վերջին յարգանքը մատուցանելու բազմաշխատ ու անկաշառ սօցիալիստին, մասնակցելով այն գրանդիօզ մանիֆէստացիաներով թաղման հանդէսին, որ կազմակերպել էր միջազգային պրօլետարիատը Ցիւրիխում։

Արդարև, տեղիս թերթերն ահագին սիւնակներ էին նուիրել մանրամասնօրէն նկարագրելու համար այդ գրանդիօզ թաղումը։ Ըստ այդ նկարագրութիւնների, եղենու փայտից շինված Բէբէլի պարզ դագաղի առջևից գնալիս են եղել աւելի քան հազար պսակակիրներ, իսկ ետևից՝ բազմաթիւ սգակիրներ, ուր եղել են հանգուցեալի սգաւոր դուստրը՝ անմիջապէս իր հօր դագաղին կից, Եւրոպայի զանազան կողմերից եկած սօցիալիստները, գերմանական րայխստագի պատգամաւորներ Լիբկնէխտն ու Ադլէրը, սօցիալ-դեմօկրատիայի յայտնի թէօրետիկոս Կ. Կաուցկին, Ցիւրիխի խորհրդարանի նախագահ Սաէօսէլը, կանտօնային դատարանի նախագահը և այլն։ Կառքերին հետեւելիս են եղել ոտքով Ցիւրիխի քաղաքային վարչութեան երկու անդամները, զանազան երկրներից եկած պաշտօնական դեպուտացիաները, միջազգային սօցիալիստական բիւրօյի անդամները, րայխստագի սօցիալիստ պատգամաւորները թւով 50 հոգի, Գերմանիայի սօցիալիստ. կուսակցութեան կօմիտէն, գերմանական սինդիկատների ընդհանուր յանձնախումբը և այլն։ Թաղման հանդէսին մասնակցողների թիւը միայն եղել է 12,000 հոգի, իսկ ժողովրդի այն բազմութիւնը, որ մասն է թափօրի մէջ, հասել է մինչև 300,000 հոգու, մի բազմութիւն, որի նմանը Ցիւրիխը երբէք չէր տեսել, նոյնիսկ Վիլհէլմ II կայսրի այցելութեան ժամանակ։ Այս մարդկային ծովը, որի վրա ծածանվելիս են եղել զանազան կօրպօրացիաների 250-ից աւելի դրօշակները և որի մէջ բազմաթիւ երաժշտական խմբեր ողբացել են Բէբէլի մահը իրանց մելամաղձոտ և խորհրդաւոր մահերգերով, առաջ է շարժվել Ցիւրիխի ժողովրդային տան առջևից և հասնելով հանգուցեալի դստեր բնակարանը՝ պահ մի կանգ է առել այնտեղ, որպէսզի իր խորը ցաւակցութիւնը արտայայտէ սգաւոր տիկնոջը երկու տխուր մահերգով։ Այնուհետեւ թափօրը յամր քայլերով շարունակել է իր հանդիսաւոր ընթացքը քաղաքի գլխաւոր փողոցներով և երեք ժամից յետոյ հասել է գերեզմանատուն։ Քաղաքի փոքրիկ գերեզմանատունը անկարող լինելով պարունակել մարդկային այդ ստուար բազմութիւնը՝ ներս են թողել միայն թաղմանը պաշտօնապէս մասնակցողներին ու ժուրնալիստները, որոնց նախօրօք մուտքի տոմսակներ են բաժանված եղել։ Դագաղի վրա խօսել են բազմաթիւ ճառախօսներ, որոնց մէջ առանձնապէս աչքի են ընկել Գերմանիայի սօց. կուսակցութեան նախագահ Մակէնբուրը, րայխստագի սօց. ֆրակցիայի նախագահ Ֆիշէրը, ապա Զուիցերիայի ազգային խորհրդի կողմից Գրէօյլիխը, Բելգիայի սօցիալիստների կողմից՝ Վանդերվիլդը, Ֆրանսիայից՝ Բրուկէն, անգլիական պրօլետարիատի կողմից՝ Կ. Հարդին, ռուս սօց.-դեմօկրատիայի կողմից՝ Պլեխանովը, Հօլլանդիայից՝ Թրէլստրան և ուրիշները։ Ներկայ չեն եղել միայն Ժօրէսը, Ժիւլ Գեդը և Վայեանը, որոնց բացակայութիւնը առանձնապէս աչքի է ընկել։ Հանգուցեալի դուստրը, անհուն կսկիծը սրտում, արիութիւն է ունեցել ներկայ լինելու այս երկար ցերեմօնիայի սկզբից մինչև վերջ, նստած մի աթոռի վրա, թանգագին դագաղի կողքին։ Նոյն օրը տեղի է ունեցել Բէբէլի դիակիզումը, և աճիւնը սափորով դըրվել իր կնոջ աճիւնի կողքին։

Տալ այս բազմաշխատ մարդու կենսագրականը և գործունէութեան պատմութիւնը՝ այդ կը նշանակէ անել գերմանական սօց.-դեմօկրատիայի պատմութիւնը, մի բան, որ լրագրական յօդուածի սահմանները մեզ թոյլ չեն տայ կատարելու։ Այդ պատմութիւնը մի յստակ հայելի է, ուր պարզօրէն ցայտում է համոզված սօցիալիստի և իր գաղափարների համար անխոնջ աշխատողի ազնիւ տիպարը։ Մենք կը բաւականանանք միայն նրա շատ համառօտ կենսագրութեամբ և նրա գործունէութեան ամենից աչքի ընկնող էջերով։

Բէբէլը ծնվել է 1840 թ. փետրվարի 22-ին (ն. տ.) Կօլօնեում հասարակ ծնողներից։ Նրա հայրը պրուսացի մի ենթասպայ էր, որ հազիւ կարողանում էր պահել իր ընտանիքը խիստ համեստ պայմանների մէջ։ Իր մանկութիւնը անց է կացրել մի բանտում, ուր իր հայրը վարում էր բանտապահի պաշտօն։ Իր «Յիշողութիւնների» մէջ նա նկարագրում է բանտի ծանր միջավայրը և բանտարկեալների կրած ամենօրեայ տանջանքներն ու ծանր պատիժները, որոնց չը դիմանալով՝ մանուկ Բէբէլը հեռանում է այդ խեղդող մթնոլորտից և մի ճախարակագործի մօտ աշակերտ է մտնում և մինչև 1862 թիւը նա մնում է ճախարակագործ բանւոր։ Այդ թուականից սկսած՝ նա տարվում է սօցիալիստական գաղափարներով և այնպէս է յափշտակվում բանւորական շարժումներով, որ մեծ եռանդով սկսում է գործել բանւոր շրջաններում և, շնորհիւ իր ճարտար, համոզիչ լեզուին ու քաղաքական ասպարէզում գործելու բնատուր ընդունակութիւններին, կարճ միջոցում մեծ ազդեցութիւն է ձեռք բերում նրանց մէջ։ Այնուհետեւ իր ազատ ժամանակը նա նուիրում է բանւորների համար դասախօսութիւններ կարդալու, ժողովներ գումարելու, նրանցից խմբեր, միութիւններ կազմակերպելու և համագումարներ հրաւիրելու, որոնց մէջ նա հետզհետէ առաջնորդողի ու ղեկավարողի դեր է ստանձնում։ Այսպէս, 1868 թւին նա նախագահում է գերմանական բանւորական միութիւնների հինգերորդ կօնգրէսին Նիւրընբերգում, ուր այս միութիւնները յարում են «Ինայն՝ որ մի փոքր խմելուց յետոյ վանականի «կատարը» տաքանում է, վճռում է հասարակաց տուն գնալ։ Այնտեղ էլ կուռւի բռնվելով՝ մարդ է սպանում։ Միով բանիւ, մաքրակենցաղ վանականը, ալկոհոլի ազդեցութեան տակ, միաժամանակ 3 խոշոր յանցանքն էլ կատարում է։

---

*) «Aus meinem Leben», von August Bebel, Stuttgart, 1910 und 1911, J.-H.-W. Dietz. Այս ինքնակենսագրութեան երկու հատորներն առայժմ տպագրված են և հասնում են մինչև 1878 թւականը։ Ա. Զ.

Անշուշտ ալկոհոլի քայքայիչ ազդեցութիւնը շատ լաւ զգում է ռուսական լաւագոյն ինտելիգենտ տարրը։ Թէև կրիական քայլերով, բայց նա քնած չէ, նա անհաւասար կռիւ է մղում ռուսական այդ ամենախոշոր թշնամու՝ ալկոհոլի դէմ՝ զանազան ընկերութիւնների անուան տակ։ Մանաւանդ հետաքրքրական և հարուստ են «Российское Медицинское Общество врачей трезвенниковъ»-ի պաւլիօնները։ Նրա վիճակագրական քարտէզից երևում է, որ 1912 թ. ընթացքում Ռուսաստանում ալկոհոլի վրա հետևեալ քանակութեամբ դրամ է ծախսվել.

| | | |
|---|---|---|
| Գինու վրա . . . | 152,000,000 | րուբլի |
| Գարեջրի վրա . . | 166,000,000 | » |
| Օղիի » . . | 1.078,000,000 | » |
| Ընդամէնը . . | 1.396,000,000 | » |

Մինչդեռ նոյն թւին տէրութիւնը իր բոլոր կարիքների վրա ծախսել է՝

| | | |
|---|---|---|
| Զինուորական մինիստր. . | 485,000,000 | ր. |
| Ներքին գործերի » . | 160,000,000 | » |
| Ծովային » » . | 113,000,000 | » |
| Հողային և շինութեան վրա | 86,000,000 | » |
| Լուսաւորութեան մինիստր. | 80,000,000 | » |
| Արդարադատութեան » | 76,000,000 | » |
| Ընդամէնը. . . | 1.000,000,000 | ր. |

Վիճակագրութիւնից երևում է, որ Ամերիկայի բանւորը տարեկան միջին թւով աշխատում է 1366 րուբլի և խմում է միայն իր աշխատանքի 1,64$^0/_0$, իսկ ռուս բանւորը աշխատում է տարեկան 499 ր. և խմում է 12$^0/_0$։ Իսկ Պետերբուրգի բանւորը աշխատում է տարեկան 417 ր. և խմում է իր աշխատանքի 53,4$^0/_0$-ը։

Աւելի հետաքրքրական են մի առանձին մասում գմուռով կնքած ու դրած «մօնօպօլիայի» օղիի բոլոր տեսակի շիշերը և վրաները խոշոր տառերով գրված՝ թէ ո՛ր շիշից որքան է խմվել մի տարվայ մէջ։ Բոլորի վրա էլ շատ ուժեղ տպաւորութիւն է թողնում...

Ինչ ասել կուզի, որ ալկոհոլն էլ իր կործանիչ վնասակարութեամբ գրեթէ յետ չէ մնում սիֆիլիսից։ Քարտէզից երևում է, որ եթէ որևիցէ մի դժբաղդ մայր $^1/_4$ բաժակ օղի է խմում, այն ժամանակ մի քանի րոպէից յետոյ ալկոհոլը անցնում է սերմնաբանի արեան մէջ (ВЪ КРОВЪ ПЛОДИ) հետևեալ քանակութեամբ.

40 րոպէից յետոյ $4^3/_4$ կաթիլ, 60 րոպէից յետոյ $4^1/_2$ կաթիլ, 75 րոպէից յետոյ $2^1/_2$ կաթիլ։

Առաջ են բերված ալկոհոլիզմից մեռնողների քայքայված թոքերը, երիկամունքը, ուղեղը և այլն և այլն, ինչպէս նաև ալկոհոլիկների ազդեցութիւնը սերունդների վրա և ամեն տեսակ յանցանքները ալկոհոլիզմի հողի վրա, որոնք բոլորն էլ ի հարկէ չափազանց հետաքրքրական են։

Ցուցահանդէսում առանձին քարտէզով առաջ են բերված 1910—1912 թ.թ. այն բոլոր առողջապահութեան ճիւղերին վերաբերեալ գրքերը, որոնք Ռուսաստանում հրատարակվել են։ Որքան եղաւ իմ զարմանքը, որ Անդրկովկասում (եթէ չը հաշւեմ Բաթումում հրատարակվող մի փոքրիկ բրօշիւրը) ոչ մի գիրք չի հրատարակվել։

Ա. Գիւրջեան

## ՓՈՔՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԸ

Պզտիկ Մարտիրոսին, ժիր, աշխոյժ, ամեն ինչ դիւրին կերպով ըմբռնող, խիստ ճարպիկ, ուշիմ, ու էլ ես ինչ գիտեմ՝ հազար ու մի բարեմասնութիւններով օժտված Մարտինին, ինչպէս նրան ոմանք անուանում են, տեսնելու համար, ընթերցող, ջափա քաշեցէք և մի 5 րոպէով գոնէ մտէք «Սէվէր» կաթնատունը, որ գտնվում է Քամոյեան եկեղեցուն մօտ, մի նկուղում։

Նեղութիւն կրեցէք մտնել այնտեղ և դուք կը համոզվէք, որ սրճարանի կամ կաթնատան մթնոլորտը չափազանց նեղ է ու սեղմ, որպէսզի իսկական Մարտիկը (սա իսկական մարտիկ է մեր կարծիքով, այդ պատճառով մենք էլ նրան Մարտիկ ենք անուանում) հնարաւորութիւն ունենայ իր բոլոր ընդունակութիւնները երևան բերել։

Պզտիկ Մարտիկը ուսում է ուզում, նա դեռ 8 տարեկան էլ չը կայ, հետևաբար ժամանակն է նրան դպրոց ուղարկել։

— Հայրիկ, ե՞րբ պիտի ուսումնարան երթամ,—հարցնում է յաճախ իր հօրը ժիր և կենդանի, «կրակի կտոր», հրահատ Մարտիկը։

Սակայն հայրը միջոցներից զուրկ է։

Մնացել է «մաթալ», ինչ անի։

Սեպտեմբերը մօտենում է, պէտք է տղային «շկօլ» ուղարկել, բայց ինչպէս։ Որ փող չը կա՞յ։ Ո՞ր մէկն անի։ Տղայի դպրոցական ծախքե՞րը հոգայ թէ՞ նրա հազար ու մի պակասը լրացնի։ Կոնսիստօրիան էլ մի կողմը կեցած՝ 4 րուբլուց պակաս չէ ուզում վերցնել ծննդեան վկայական տալու համար։ Էլ ո՞ր ջուրն ընկնի խեղճ հայրը։ Չէ՞ որ Մարտիկից զատ այլ «խժռողներ» ևս ունի, որոնք բերանները լայն բացած «ծիւ, ծիւ» անելով հաց են ուզում։

Շատ բան պէտք չէ փոքրիկ Մարտիկին։

Անհրաժեշտ է նրա համար անմիջապէս մի ծննդեան վկայական վերցնել կոնսիստօրիայից, որի ծախքը մօտ 5 ր. 60 կոպ. է, հոգալ «պիճիլիկ» աշակերտի դպրոցական պիտոյքի և հագուստի ծախքը, և ահա ամեն ինչ պատրաստ է։

Իսկ կերակուրը Մարտիկը հայրիկից կը ստանայ։

Ուրեմն 15—20 րուբլով կարելի կը լինի փոքրիկ Մարտիկին փրկել կաթնարան-սրճարանի աննպաստ միջավայրից և նրան ուսում տալ, մարդ դարձնել։

Ընթերցող, եթէ երբէք խօսքս լսէք և «Սէվէր» կաթնատունը հանդիպելուց և ուսումնածարաւ Մարտիկին տեսնելուց յետոյ, ինձ հետ համաձայնէք, որ «պիճիլիկ» Մարտիկը արժանի է առանձին ուշադրութեան և խնամքի, այն ժամանակ, խնդրում եմ, գրածիս ոյժ տալու համար միացէք ինձ հետ և ձեր լուման ուղղէք «Մշակի» որպէսզի հնարաւոր դառնայ Մարտիկին «շկօլ» ուղարկել։

Մարտիկը շատ ու շատ կը ցանկայ դպրոց գնալ, աւարտել ուսումը և մե՜ծ, մե՜ծ մարդ դառնալ։

Ցար. Գասպարեան

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

### Անզգուշութեան զոհ

Հին-Նախիջևան, 19 օգոստոսի

Մի քանի օր առաջ Օրդուբաթում անզգուշութիւնից տեղի է ունեցել մի երիտասարդ կնոջ սպանութիւն Թուրք ընտանիքում, հետևեալ հանգամանքներում։

Ինն տարեկան մի երեխայ հօր լցրած հրացանը քցում է ուսը, տան մէջ սկսում է խաղալ, դէս ու դէն քայլել զինւորի պէս և հրացան ուսից ցած բերելիս, անզգուշութիւնից յանկարծ բացվում է և բերդանի մահաբեր գնդակը խրվում է նոյն տան մէջ աշխատող երեխայի մօրաքրոջ վզակոթին և անմիջապէս տեղն ու տեղը սպանում է խեղճ կնոջը։

Օր. Լուսաբեր Տէր-Ստեփանոսեան

### Դարձեալ նոյնը

Շնող գիւղ, 18 օգոստոսի

«Մշակի» անցեալ համարներից մէկում գրել էր, թէ գիւղական աշխատանքների ներկայ եռուն ժամանակ աւելորդ կիրակի-հուքմիներ պահելը գիւղացիների մէջ որպիսի անտեղի ղալմաղալների և անախորժութիւնների առիթ է դառնում։ Խօսենք ներկայ դէպքի մասին։

Այժմս կալոցի ամենաեռուն ժամանակն է. մարդիկ հաց ուտելու վրա անգամ չեն ուզում ժամանակ կորցնել և շտապում են «չոր ու ցամաքով» կալոցը վերջացնել։

Եւ ահա այդ հարայ-հրոցի ժամանակ յանկարծ գիւղացուն յայտարարում են, որ նա պէտք է—շաբաթ, կիրակի և երկուշաբթի—երեք օր կիրակի պահէ։ Լուսացաւ Շողակաթի շաբաթը. ըստ երևոյթին բոլորն էլ տրամադրված էին «հուքմի» պահելու, բայց քիչ յետոյ գիւղի զանազան թաղերում սկսեցին կալսելու աշխատանքները։ Կազմվեց աշխատելը արգելող խմբակ, որը շրջելով կալերը՝ ուզում էր արգելել, սակայն հետևանքը եղաւ այն, որ, թէև մի քանի տեղերում եզները շարժվեցին և տուր ու դմփոցի ձայներ էլ լսվեցին, բայց վերջ ի վերջոյ շատերը սկսեցին աշխատել։ Բանը այնտեղ հասաւ, որ քահանայի օգնութեամբ ստիպված եղանք եկեղեցական տօնացոյցի օգնութեանը դիմել, որտեղ Շողակաթը ճիշդ որ չը գտնվեց կիրակիների շարքում։ Արդեօք հարկաւոր չէ՞ր համարի Էջմիածինը իր օրացոյցները կազմելիս ի նկատի ունենալ նման հանգամանքները և գիւղական քահանաներին առանձին հրահանգներով իմացնել, թէ որպիսի հուքմիների պահելը պարտաւորեցուցիչ է ռաշպարի համար, մանաւանդ ամառ ժամանակ։ Այսպէս օրացոյցներում դրված իւրաքանչիւր խաղի համար պահանջվող հուքմիները միշտ առիթ կը տան նման անախորժ դէպքերի։

Բ. Մկրտումեան

### Կարսը սարսափի մէջ է

Կարս, 19 օգոստոսի

Բոլոր հարուստ դասակարգը ստացել է սպառնական անստորագիր նամակներ, որոնցով խոշոր գումարներ են պահանջվում։ Աւելի վախկոտները, մի քանի տարի աւելի ապրելու համար, կատարում են շանտաժիստների ցանկութիւնը, որով աւելի խրախուսում են աւազակներին իրանց պախարակելի գործողութեան մէջ։

Երէկ մէկին՝ նամակը ձեռը՝ բռնեցին։ Ի՞նչ պիտի լինի, մինչև ե՞րբ պիտի ժողովուրդը ապրի այսպիսի սարսափների մէջ։ Ո՞ւր են դատաւորները։

Արամ

### Լուրեր Դիլիջանից

Դիլիջան, 18 օգոստոսի

Վերջանում է ամարանոցային կեանքը։ Օրական տասնեակ կառքերով մարդիկ շտապում են իրանց տները։

Այնուամենայնիւ եղանակները դեռ տաք են և շատերը ստիպված են մնալու մինչև սեպտեմբերի սկիզբը։

Շաբաթ, օգոստոսի 17-ին, տեղիս հայ դերասանական խումբը վերջացրեց իր ներկայացումների շարքը։ Մինչև այսօր տրվել է 8 պիէս. բոլորն էլ անցել են աջողութեամբ։ Այս տարվայ խմբում իրանց կատարած դերերով—ինչպէս և անցեալ տարի—աչքի ընկան տ. տ. Գուլազեան և Սոֆիկ, իսկ տղամարդկանցից՝ Ալիխանեան, Անդրանիկ և Միրազեան։ Խմբի նիւթական աջողութիւնը բաւարար է, ինչպէս լսեցինք։

Ս. Ղազարեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ «Մշակի» խմբագրութեան անդամ Յովհաննէս Տէր-Մարկոսեանը, որի մահը այսօր տխրութեամբ գուժում ենք, տկար էր լեարդի հիւանդութեամբ։ Երկու տարի առաջ Յ. Տէր-Մարկոսեանը հիւանդացել էր թոքերի բորբոքումով, որից թէև նա բուժվեց, բայց չը կարողացաւ վերադարձնել իր նախկին առողջութիւնը։ Այս տարի նա սկսեց տառապել լեարդի հիւանդութիւնից, որը վերջին շաբաթները լուրջ արտայայտութիւն ստացաւ։ Նրան բժշկում էին վերջին տարիներում բժշկապետներ Կ. Ստեփանեան, Բ. Նաւասարդեան, Ա. Շխեան, Մ. Մկրտումեան, իսկ վերջին ժամանակները բժշկապետ Յ. Ադամեան։

◆ Թիֆլիս է եկել Կրեշտովիչը, որը երկար տարիներ ապրել է Ամերիկայում և յայտնի է իր բազմաթիւ թղթակցութիւններով և յօդուածներով, տպված ռուսական լրագիրներում և ամսաթերթերում։ Կրեշտովիչը ներկայումս ուղարկված է մեր երկիրը երկրագործութեան դեպարտամենտի առաջարկութեամբ ծանօթացնելու կովկասեան գիւղատնտեսներին Ամերիկայում ընդունված մրգաբուծութեան մի քանի առանձնայատկութիւնների և գլխաւորապէս արևի տաքով միրգ չորացնելու եղանակի հետ։ Կրեշտովիչի ղեկավարութեամբ դասընթացքները կը սկսվեն սեպտեմբերի 15-ին Թիֆլիսում և կը շարունակվեն երկու շաբաթ։ Դասընթացքներին ներկայ կարող են լինել բոլոր ցանկացողները։

◆ Դերասան Յ. Աբէլեանը Մանգլիսից Թիֆլիս վերադառնալով ձեռնարկել է դերասանական խումբ կազմելու գործին, որպէսզի սեպտեմբեր ամսվայ հէնց սկզբում Թիֆլիսից մեկնի գաւառները ներկայացումներ տալու համար։ Որպէս տեղեկացանք, Աբէլեանի խումբը կազմված է լինելու մեր կարող դերասաններից։ Կազմված ռեպերտուարը հետաքրքրական է։

◆ Մօտ օրերս Թիֆլիս է գալու իր 3—4 աշակերտների հետ միասին Վիէննայի արուեստների պատմութեան ճեմարանի տեսուչ Իոսիֆ Ստրժիգովսկին՝ Կովկասում գիտական ճանապարհորդութիւն կատարելու նպատակով։ Ճանապարհորդութեան գլխաւոր նպատակն է ուսումնասիրել հայկական և վրացական ճարտարապետութիւնները։

◆ Վերջին ժամանակներս ռուսական ծխախոտի մեծ պահանջ է զգացվում, մանաւանդ բարձր տեսակի։ Անում են արտասահման ուղարկելու համար ոչ միայն Ղրիմի, Սուխումի, Սօչիի, Եկատերինօդարի, այլ և Լազօղլի նման հեռաւոր շրջանի ծխախոտները։ Մինչև այժմ ծխախոտը ուղարկում էին Եգիպտոս, բայց այժմ պահանջում են նաև Գերմանիայից, Աւստրիայից, Ֆրանսիայից։ Շնորհիւ այդ հանգամանքի, ծխախոտի գները այժմ բարձրացել են։

◆ Կովկասի փորձադաշտերն ու կայարանները ուսումնասիրելու համար Պետերբուրգից եկած մասնագէտ Վիննէրը այսօր մեկնեց Երևանեան նահանգը։

◆ Օգոստոսի 20-ին քաղաքային դումայի տնտեսական մասնաժողովը, Ա. Մ. Տէրտէրովի նախագահութեամբ, ծանօթանալով քաղ. անասնավաճառանոցի և սպանդանոցի հաւաքած տեղեկութիւնների հետ, հնարաւոր գտաւ պակսեցնելու մսի սակագինը փութը 1 կոպէկով, նշանակելով՝ տաւարի մսի համար՝ 12 կ., ոչխարի մսի համար 14 կ. և գոմէշի մսի համար 7 կոպէկ։ Գառան սակագինը որոշել է վերացնել։ Հացի սակագինը որոշել է թողնել անփոփոխ, միայն թէ պահանջել հացթուխներից լաւացնել հացի յատկութիւնը։ Այդ նիստում պարզվել է, որ առևտրա-տնտեսական գործակալների մի քանի արձանագրութիւններով հացթուխների դէմ եղած գործերը տանուլ է տուել քաղաքային փաստաբանը հաշտարար դատարաններում, որի շնորհիւ հացի 2-րդ տեսակը 1-ի տեղ վաճառող հացթուխները արդար են ճանաչվել։ Մասնաժողովը որոշել է խնդրել քաղ. վարչութեանը ծանօթացնելու քաղաքի փաստաբանին, թէ ինչպէս պէտք է տարբերել հացի տեսակները իրարից։

◆ Քաղ. դումայի տնտեսական մասնաժողովը քննութեան ենթարկեց Թիֆլիսի սայլապանների աւագների կողմից աղիւսի գործարանատէրերի դէմ յարուցված գանգատները և աղիւս կրելու համար որոշ սակագին նշանակելու խնդիրքը։ Առևտրա-տնտեսական ոստիկանութեան խորհուրդը մշակել էր սակագների նախագիծ, որի համաձայն Նախալօվկայում, Վերայում և Նաւթլուղում գտնվող աղիւսի գործարանները իւրաքանչիւր 1000 աղիւսի տեղափոխութեան համար պէտք է վճարէին սայլապաններին 2 ր. 80 կ. մինչև 6 ր.։ Տնտեսական մասնաժողովը, այդ նախագիծը քննելուց յետոյ, այնուամենայնիւ եկաւ այն եզրակացութեան, որ ինքը կօմպէտէնտ չէ սակագին նշանակելու համար, և որ աւելի լաւ է թողնել աղիւսի գործարանատէրերին և սայլապաններին ազատ համաձայնութեամբ վճռելու այդ հարցը։

◆ Մի անձն, որ ցանկանում է անյայտ մնալ, Շուշուց ուղարկել է մեզ 5 ր., խնդրելով, որ այդ գումարը յանձնենք «Լոյս» ընկերութեան վարչութեանը որպէս նուէր։ Գումարը յանձնեցինք ըստ պատկանելոյն։

◆ «Закавказье» և «Закавк. Рѣчь» լրագրի օգոստոսի 21-ի համարներում Մելիք-Ազարեանի նորակառոյց տան մասին լոյս տեսած լուրի առիթով, Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ նահանգական վարչութեան շինարարական մասի ինժեներներ Վասիլիեւն ու Բարտը դիտեցին Մելիք-Ազարեանի շէնքը և ոչ մի պակասութիւն չը գտան. Բացի դրանից հերքում են տարածված շինծու լուրը նաև շինութիւնը կառուցանող ճարտարապետներ Անդրիօլէտտին և Օբօլենսկին։

◆ Օգոստոսի 19-ին պրիստաւ Ջիխլաձէն սանիտարական բժիշկ Զաբլուդովսկիի, առևտրա-տնտեսական մասի գործակալ Կ. Բ. Տէր-Օգանեզովի հետ միասին դիտելով Շէյթան բազարի մրգավաճառ խանութները, ոչնչացրել են 300-ի չափ փչացած ու խակ ձմերուկ և սեխ, 2 պնակ կովի հոտած իւղ և աղ դրած վարունգ։

◆ Օգոստոսի 20-ին Զուբալովի անուան ժողովրդական Տանը տրուելու է ներկայացում դերասանուհի Մ. Պ. Բէլեայեվայի դերասանական 30-ամեակի առիթով։

◆ Թիֆլիսի էլեկտրաքարշի բանւորները 413 ծառայողների ստորագրութեամբ մի խնդիրք են ներկայացրել Թիֆլիսի նահանգի գործարանական տեսչին, խնդրելով իրանց աշխատանքը ևս առնել իր իրաւասութեան ներքոյ։

◆ Թիֆլիսի քաղ. վարչութեան գոյքերի ցուցակը կազմելու համար ժամանակաւորապէս հրաւիրված Իւրի Դ. Կօբեակօվը զեկուցում է ներկայացրել վարչութեանը, որ անհրաժեշտ է վարչութեան կից ունենալ մնայուն ինվէնտարային բիւրօ։

◆ Օգոստոսի 21-ին, գիշերվայ ժ. 3-ին, մարդատար գնացքի I կարգի վագոնում Զագալի և Գանձակ կայարանների միջև, սրտի կաթուածից յանկարծամահ է եղել պարսկահպատակ Մինաս Տէր-Մինասեանը։

◆ Արտասահմանից եկած ինժեներ Ալէքսանդր Ալէքսանդրովիչ Լէմանը, որի բնակարանից գողութիւն էր կատարված, յայտնել է ոստիկանութեանը, որ իր մօտից գողացել են զանազան ոսկեղէն և արծաթեղէն իրեր 417 ր. արժողութեամբ, 3 արժէքաւոր տոմս գիւղացիակ, հող. բանկի № № 31643, 31644 և 31645, իւրաքանչիւրը հարիւրական րուբլու արժողութեամբ և մի տոմս էլ դարձեալ նոյն բանկի № 03917 500 րուբլու արժողութեամբ։

◆ Օգոստոսի 20-ին, գիշերվայ ժ. 12-ին, հրդեհից այրվել է Կօբիյսկայա տուպիկում Ջիչինաձէի երեքյարկանի տունը, որ ապահովագրված էր «Րօսսիա» ապահովագրական ընկերութեան մօտ 20,300 րուբլով։ Տանտիրոջ վնասը հասնում է 30,000 րուբլու։

◆ Օգոստոսի 21-ին Մինկվիցեվսկայա փողոցի № 14 տանը ապրող Թիֆլիսեցի Մարիա Պետրովնա Գրիցենկօն, 18 տարեկան, անձնասպանութիւն գործելու նպատակով թունաւորել է իրան քացախի լուծուածքով։ Նրան տարել են Միքայէլեան հիւանդանոց, ուր բուժվում է։ Պատճառը չքաւորութիւնն է։

◆ «Վէտցել» հիւրանոցատէր Նոյ Գլախովիչ Սիխարուլիձէի գրասեղանի կոտրված արկղից օգոստոսի 21-ի գիշերը գողացել են 700 ր. կանխիկ դրամ և երկու մուրհակ 250 րուբլու արժողութեամբ։ Հաղորդելով պատահարի մասին 10-րդ ոստիկանամասի պրիստաւին, Սիխարուլիձէն կասկած է յայտնել իր մօտ ծառայող Կօբերիձէի, Տուրիշվիլիի և Բուրցենիձէի վրա, որոնք կալանաւորված են արդէն։

◆ Շամախուց մեզ գրում են. «Այս տարի սոսկալի տարի է մեզ համար, ամբողջ ամառը անձրևի մի շիթ չէ ընկել ցած, խմելու ջուր չը կայ, հորերը, աղբիւրները ցամաքել են, Ջրի սոսկալի նեղութիւն է կրում ժողովուրդը. հացը նոյնպէս թանկ է. պուդը 2 ր. երրորդ տեսակի հացը, մինչ 18—20 կ. փութը, միւս մթերքները նոյնպէս թանկ են»։

## ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ. ԱՐ.

### ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Վաղարշապատ, 11 օգոստոսի

Դերասան Ն. Մաղթեանն այսօր, տեղիս սիրողների մասնակցութեամբ, խաղաց ամառայ դպրոցի դահլիճում 1) «Դոն Պիէտրօ» 1 գործ. և 2) «Առաջ մեռան՝ ապա ամուսնացան» պիէսները։ Մաղթեանն իր դերումն էր։ Սիրողներից օր. օր. Քեալաշեանը, Տէր-Յովհաննիսեանը, Ծրաստորեանը և տ. Յոնեսեանը լաւ կատարեցին իրենց դերերը. կօմիկ է և կարող է ապագայում լաւ դերասան դուրս գալ։

Դահլիճը նախորոք լեցուն էր հանդիսատեսներով. բացակայում էին միայն տեղիս «ինտելիգենտները» և հայրենասէրները, կարծես ներկայանալը պարտք չեն համարում.

Վ. Գ. Ա.

Նոր-Բայազէտ, 4 օգոստոսի

Դերասան Աճէմ-Եպիսկոպեան շրջանավորներ է եկել իր ներկայացումներովը զբաղեցնելու։ Օգոստոսի 25-ին խաղաց առանձին մի փոքր և կարգաւորեալ դրամատիկական, ներկայ էին առաջ շատ տեսողներ։

Իսկ 27-ին ներկայացրեց Ալ. Շիրվանզադէի «Արգելքի նախիրը» դրաման 4 գործող.

---

տերնացիոլի» սկզբունքներին։ Բէբէլը ծանօթանում է Լիբկնէխտի, Սօնմանի և Լասսալի հետ, որոնք բոլորն էլ, և առանձնապէս առաջինը, մեծ ազդեցութիւն են ունենում Բէբէլի վրա. այս նկատմամբ ահա թէ ինչ է գրում նա իր «Յիշողութիւնների» մէջ, որի երրորդ հատորը, ինչպէս ինքն էլ նախազգում էր իր մահվան նախօրէին, դժբաղդաբար չը կարողացաւ վերջացնել։ «... Նա (Լիբկնէխտը) ինձնից 14 տարով մեծ էր, և երբ նրա հետ ծանօթացայ, նա քաղաքական գործունէութեան փորձառութեամբ ինձնից շատ բարձր էր։ Նա կրթված, զարգացած մարդ էր. մինչդեռ այդ զարգացումը պակասում էր ինձ։ 12 տարի ապրելով Անգլիայում Մարքսի և Էնգէլսի ընկերակցութեան մէջ, Լիբկնէխտը շատ բան էր սովորել նրանցից։ Կասկած չը կայ, որ նա մեծ ազդեցութիւն ունեցաւ ինձ վրա։ Սակայն եթէ նա չը լինէր էլ, ես սոցիալիստ կը դառնայի. ես արդէն սոցիալիզմի ճանապարհի վրա էի, երբ նրան հանդիպեցի. Նրա հետ ունեցած ծանօթութիւնս աւելի փութացրեց իմ՝ սոցիալիզմին յարելը. ահա թէ որն է այն ծառայութիւնը, որ նա ինձ մատուցել է...»։ Լիբկնէխտի հետ նա հրատարակում է մի շաբաթաթերթ, ուր ուրուագծում է դէմօկրատական հասարակութեան հիմքերը և ապա 1869-ին դարձեալ Լիբկնէխտի հետ նա հիմնում է «Volkstaat»-ը, որ մեծ աջողութիւն է ունենում։

1867-ին Բէբէլը ընտրվում է ռայխստագի պատգամաւոր՝ հանդիսանալով առաջին սոցիալիստ պատգամաւորը, և այդպիսով բաց է անում պարլամենտի դռները սոցիալիստների առաջ մի այնպիսի էպօխայում, երբ Բիսմարկն իր երկաթէ քաղաքականութեամբ անողորմ հալածանք էր սկսել սոցիալիստների դէմ։ 1870-ին նա արտասանում է այն հռչակաւոր ճառը, որով նա կոչ է անում կրեդիտ բաց չը թողնել կառավարութեանը Ֆրանսիայի դէմ պատերազմ վարելու համար, իսկ 1881-ին նա խիստ բողոք է յարուցանում Ալզաս-Լօրէնի գրաւման դէմ։

1872-ին Բէբէլն ամբաստանված որպէս հայրենիքի դաւաճան՝ ատեան է դուրս գալիս Լայպցիգի դատարանում և պաշտպանելով իր սոցիալիստական պրօպագանդն ու հասարակապետական ձգտումները՝ դատապարտվում է այսու հանդերձ երկու տարվայ բանտարկութեան։ Դեռ նոր բանտից ազատ արձակված, նա շարունակում է անընկճելի կերպով իր գործունէութիւնը և նորից ինննամսեայ բանտարկութեան ենթարկվելով՝ այս անգամ պատգամաւորութեան մանդատից զրկված է յայտարարվում։

Սակայն 1874-ին նա վերստին ընտրվում է ռայխստագի պատգամաւոր և այդ թւականից սկսած մինչև մահը, բացառութեամբ մի քանի կարճատև ընդմիջումների, չէ թողնում այլ ևս պատգամաւորական աթոռը և եռանդով պայքարում է Բիսմարկի առաջարկած զինւորական բացառիկ օրէնքների և գործ դրած այն բոլոր միջոցների դէմ, որոնք նպատակ ունէին զարգացնել Գերմանիայում միլիտարիզմը։

Ամբողջովին նուիրված լինելով սոցիալիզմին և բանւորական շարժմանը, Բէբէլը անխոնջ ջանք է գործ դնում համերաշխութիւն և զօրեղ կապ հաստատել իր կուսակցութեան ներսում, հաւատարիմ մնալով սոցիալիստական սկզբունքների բոլոր կէտերին։ Իսկ կուսակցութիւնից դուրս՝ նա անհատնում խանդով, աննկուն կամքով, զարմանալի տոկունութեամբ և բնատուր անկաշառ նուիրվածութեամբ պայքար է մղում մի կողմից զինւորական մօնարխիայի և միւս կողմից՝ կապիտալիստական հասարակակարգի ոտնձգութիւնների դէմ։

Դեռ ներկայ մայիս ամսին նա մասնակցում էր Բեռնի ֆրանս-գերմանական առաջին համագումարին, որի նպատակն էր հաշտ յարաբերութիւններ ստեղծել երկու պետութիւնների միջև։

Բէբէլի մահը, որ անբուժելի վիշտ պատճառեց միջազգային պրօլետարիատին և առանձնապէս գերմանական բանւորութեանը, որի համար նա այնքան սիրելի էր և որի մէջ նա ունէր շատ աւելի մեծ ազդեցութիւն ու ժողովրդականութիւն, քան մինչև անգամ Մարքսն ու Էնգէլսը, ցնցեց ու յուզեց նաև ամբողջ քաղաքակիրթ աշխարհը. մինչև անգամ նրա գաղափարական հակառակորդները խորը ցաւ արտայայտեցին, բարձր գնահատելով նրա արժանիքները որպէս համոզված սոցիալիստի, անխոնջ աշխատողի, ճարտար հռետորի, շիտակ մարդու և ազնիւ հակառակորդի։

Բէբէլը թողել է մի կտակ, որով նա ցանկութիւն է յայտնում իր մարմինն այրելու և աճիւնը Ցիւրիխ տանելով՝ դնելու կենտրոնական գերեզմանատանը, իր կնոջ աճիւնի կողքին, ինչ որ նոյնութեամբ կատարվել է արդէն։ Բացի այդ, իր կտակով նա թողնում է գերմանական սոցիալիստական կուսակցութեանը մի զգալի գումար յանձնելով նրան նաև հրատարակման իրաւունքը իր աշխատասիրութիւնների, որոնք բոլորն էլ, չը նայած հեղինակի ինքնուս լինելուն, հանրածանօթ են, խիստ արժէքաւոր ու շատ բարձր գնահատված։

Ա. Զ.

Ժընև

ղութեամբ: Ասլանի դերը խաղաց Լնքը՝ Ամօ-Խարազեան, իսկ նրա դստեր՝ Հերիկինը՝ օր. Բունիաթեան, որը աւելի լաւ Հիւրի կը լինէր, եթէ չափազանց չը յուզվէր դրամատիկական տեսարաններում: Լաւ տարաւ Փերիի դերը օր. Լալայեան: Իսկ նրա հայր Նազէլի և խենթ Ջինիի դերերում տպաւորիչ էր տ. Նինուէլ, որը մանաւանդ Նազէլի դերում օրօրոցի երգը երգելիս արտասուք քամեց շատերի աչքերից: Ռէս Մնօյի դերում գեղեցիկ պատկերացում տուեց պ. Մուրադեան, որը իսկական ժամանակակից գիւղական ռէսների տիպն էր ներկայացնում: Միւս երկրորդական դերակատարներ Զալդրանեան (Բարկէն), Ազատեան (Սուրէն), Պանարէ (առաջին գուժկան), Տէր-Աբրահամեան (երկրորդ գուժկան) և օր. Ազարեան (Շողիկ) կարողացան ներդաշնակութիւն պահպանել խաղի ամբողջութեան մէջ, որը ընդհանրապէս անցաւ աշխոյժ, բացի վերջին գործողութիւնից, որը թոյլ անցաւ, չը նայած իր յուզիչ, տրագիքական արիւնոտ տեսարաններին...

Դահլիճը ասեղ ձգելու տեղ չը կար. ժողովուրդը, ինչպէս երեւում է, թատրոնի համն առել և լցնելով թատրոնի դահլիճը՝ լուռ հետեւում էր ներկայացմանը: Սակայն, ցաւ է ասել, որ թատրոնականները ամեն անգամ էլ լինում են մի տեսակ դասակարգ, այն է՝ առաջնակարգ ինտելիգենտ կոչված դասը, իսկ բուն ժողովուրդը, այն է հասարակութեան ստորին և միջին դասակարգերը զուրկ են թատրոնական ներկայացումներից: Թէպէտ շատերի ցանկութիւնն է, որ թատրոն յաճախեն նաև ժողովրդի ցածր դասակարգերը, բայց նրանց համար անմատչելի են ներկայացումները գների կողմից, քանի որ մի րուբլի կամ նոյն իսկ 50 կ. մեծ փող է համարվում:

Եթէ իսկապէս ցանկութիւն կայ գաւառական բուն ժողովուրդը կապել թատրոնի հետ, անհրաժեշտ է թեթև պայմաններ ստեղծել այդ բանը իրագործելու համար, այն է՝ էժանացրած գներով ներկայացումը կրկնել երկրորդ անգամ հասարակ ժողովրդի համար: Մեր կարծիքով, այդ հանգամանքը ոչ մի վնաս չի բերի մեր դերասաններին, որոնք ամառվայ սէզօնին սովոր են գաւառները ման գալ և ներկայացումներ կազմակերպել տեղական սիրողների մասնակցութեամբ: Օրինակ՝ երբ մի որևէ գաւառական քաղաքում մի ներկայացում է տրվում սովորական գներով—1 ր. 50 կոպեկից մինչև 40 կ.—երկրորդ օրը նոյն ներկայացումը կրկնել բուն ժողովրդի համար և և տոմսակների գները 10-ից 50 կ. նշանակելով ծախել միմիայն հասարակ ժողովրդի մարդկանց: Այդ միջոցը միայն կարող է հասարակ ժողովրդին կապել թատրոնի հետ, որը, անսովոր լինելով հայկական թատրոնի կրթիչ նշանակութեանը, կարծում է, թէ դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի օյինբազութեան տեղ, կամ ֆոկուսնիկի վայր: Հարկաւոր է ցոյց տալ հասարակ ժողովրդին, որ թատրոնը նոյնպէս ժողովրդի կրթական հաստատութիւն է, և այդ հոգսը իրանց վրա պիտի վերցնեն դերասանական խմբերը, որոնք շրջում են գաւառները ներկայացումներ տալու նպատակով:

Գ. Սենամեան

## ՄԱՄՈՒԼ

Խօսելով «Հին Աստուածների» անպասելի աջողութեան մասին «Рус. Вѣд.» լրագրի № 186-ում Իւրի Վեսելօվսկին հետեւեալ կարծիքն է յայտնում.

Որպէսզի բոլոր արժանւոյն գնահատենք այդ նոր պիէսի արտակարգ աջողութիւնը, հարկաւոր է նկատի առնել, որ հայկական բեմի ինքնուրոյն ռեպերտուարը նոյնիսկ այժմ աչքի է ընկնում առանձնապէս ոչ հարստութեամբ և ոչ բազմակողմանիութեամբ: Մինչև նորագոյն ժամանակներս այդ ռեպերտուարի աղօտ ֆոնի վրա վառ կերպով նշմարվում էին միայն առանձին, աւելի աչքի ընկնող ու բնորոշ պիէսները, ինչպէս 1912 թւին հանգուցեալ դրամատուրգ Գաբրիէլ Սունդուկեանի թիֆլիսի կեանքից առած կենցաղագրական կոմէդիաները (որոնցից լաւագոյնները, թարգմանված են ռուսերէն), ժամանակակից տաղանդաւոր գրող-հոգեբան Շիրվանզադէի առանձին դրամաները և մի քանի ուրիշները:

Եւ ահա այժմ հայկական դրամատիկական գրականութեան մէջ կայ էլի մի աշխատութիւն, որը կարող է պահպանվել ռեպերտուարում: «Հին Աստուածները» սիմվոլիկական է և միևնոյն ժամանակ իմաստալի մի պիէս, որ առիթ է տալիս շատ խորհրդածութիւնների:

Դրամայի գլխաւոր հերոսը, երիտասարդ աբեղան, Մցխիրի նման հարկադրված լինելով թաղել իր երիտասարդութիւնը վանքի պատերի մէջ, ապրում է հոգեկան տանջալից կռիւներ, ենթարկվելով անսպասելի կերպով Հին Աստուածների հմայքին, որոնք դեռևս վերջնականապէս չեն յաղթված ու վտարված քրիստոնէութիւնից, թէև նրանց տաճարների աւերակների վրա կառուցված են եկեղեցիներ և ինչ-որ մի տեսակ հեթոսական «երկհաւատք» ույժով շարունակում են ապրել ժողովրդի հոգու մէջ, թէև գաղանի երիտասարդին, որը ապրում է այդ օրհասական կռիւը, որը, վերջապէս, դրդում է նրան իրան ծովի ալիքների մէջ ձգել, շրջապատում են իրանց կոչմանը ձեռնահորէն վերաբերվող, արտաքին բարեպաշտութիւնից ու մութացկանութիւնից դէնը չանցնող, ոչ մի բանի վրա չը խորհող վարդապետներով: Սակայն միապաղաղ և խորը պահանջներից ու ձգտումներից զուրկ վանական իրականութեան ֆոնի վրա աչքի է զարնում միւսների միջից էլի մի պայծառ, նկատելի կերպարանք—վանահօր կերպարանքը արդէն տարիքաւոր մի մարդու, որը ամբողջ գլխով բարձր է կանգնած բոլոր միւս միաբան եղբայրներից և միևնոյն ժամանակ հեռու է երիտասարդական կրքի խռովայոյզ բռնկումներից, որը և ամբողջովին տիրապետում է երիտասարդ վարդապետին: Դա մի համոզված ալտրուիստ է, ոգու ասպետ, որը վրդովվում է իրան շրջապատողների հայեացքների մանրութեամբ, մերկանտիլութեամբ և նեղմտութեամբ և ձգտում է բարձրանալ նրանց համար անմատչելի բարձրութեան վրա, ստեղծել նոր տաճար, որը մի տեսակ պէտք է դառնայ սիմվօլ նրա անհատական դաւանանքների, որոնումների ու տենչանքների:

Հեղինակը մեզ փոխադրում է հին Հայաստան, գեղանկար Սևանայ լիճը: գործողութիւնը տեղի է ունենում մեր ժամանակից 1000 տարի առաջ: Բայց և այնպէս պիէսում չը կայ ոչինչ յատկապէս հայկական կամ որոշ դարաշրջանի հետ շաղկապված. կարելի էր ցանկանալու դէպքում փոխել անունները, մի քանի մանրամասնութիւնները և յարմարեցնել նրան ամեն մի երկրի և բոլորովին ուրիշ ժամանակի: Ջուր կը լինէր որոնել նրանում որևէ զուտ տեղական բան, էկզօտիկական, դրամատիկական ստեղծագործութեանը, սիւժէտին և ուրիշ ազգերի տեխնիկային: Շանթի դրաման հայերի համարեա թէ առաջին տուրքն է ընդհանուր եւրոպական գրականութեանը: Շանթի մէջ ուրիշ դէպքերում կարելի է, ձշմարիտ է, նկատել հետքեր ու նմանութիւններ արեւմտա-եւրոպական հեղինակներին՝ Իբսէնին, Հաուպտմանին նայլն:

Եւ այնու ամենայնիւ նրա պիէսը, որ գրված է ընտիր, պատկերաւոր և հնչեղ լեզուով, չը նայելով իր առանձին պակասութիւններին, ուշագրաւ երևոյթ է ներկայացնում իրանից:

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շամախի, 7 օգոստոսի

«Մշակի» № 158-ի մէջ «Մեր կեանքից» վերնագրով մի թղթակցութիւն էի գրել, որը մեծ աղմուկ ու հետաքրքրութիւն առաջ բերեց քաղաքացիների շրջանում:

Նրանք, որոնք իրանց պատկերը հայելու նման պարզ էին տեսնում թղթակցութեանս մէջ, փոխանակ իրանց սխալը ուղղելու՝ կասկածով բռնում են այս կամ այն գրագէտի ետևից ու իրանց էշհամներով նախատում, սպառնում, թէ ինչո՞ւ է քաղաքի անունը «խայտառակել».. Եւ ստիպում են մարդկանց, որ եթէ չեն ուզում խայտառակվել, հրապարակով յայտնեն, թէ թղթակցութեան հեղինակը իրանք չեն:

Չափազանց դժուար է գաւառական քաղաքում նստել ու պարզ ստորագրութեամբ քաղաքի կեանքից գրել, այլապէս նախ հայհոյանքի, ապա՝ մութ գիշերները ապտակների տարափի պիտի արժանանայ թղթակիցը:

Աւելորդ է համաքաղաքացիներիս վրդովմունքը. եթէ թղթակից Շամախեցին (ես) որևէ սխալ, սուտ լուր է հաղորդել իր թղթակցութեան մէջ, խմբագրութեան դռները լայն բաց են, իսկ պօստային հաղորդակցութիւնը ապահով, ուստի կարող են ոչ միայն իրանց արդարացնել, այլ և սուտ լուրեր հաղորդող թղթակցին սևացնել ու խմբագրութեան դռները ընդմիշտ նրա առաջ փակել տալ, որից շնորհակալ կը լինի խմբագրութիւնը:

Այդ է հրապարակային, մամուլի մէջ կռւելու ճանապարհը, այլ ոչ թէ մարդկանց այն նեղ տեղը հասցնել, որ ոչինչից տեղեակ չը լինելով, ստիպված լինեն գրելու թէ այս-ինչ կամ այն-ինչ յօդուածի հեղինակը իրանք չեն, ինչպէս «Մշակի» № 174-ում Սն. Արզաձոունին յայտարարում իմ գրած թղթակցութեանս մասին, որի իւրաքանչիւր բառը աչք ծակող ճշմարտութիւն է:

Այդպիսով մի քանի քաղաքացիներ, ի ցաւ ընդհանուրի, հրապարակով միայն ապացուցում են քաղաքի բարոյական սնանկութիւնը, որը մեզ, շամախեցիներիս, վիրաւորական է և ոչ ցանկալի:

Շամախեցի

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Յայտնի ռուս երաժիշտ Ա. Կ. Գլազունովը հիւանդացել է:

◆ Պետերբուրգի դիպլոմատիական շրջաններում համակրանքով չեն վերաբերվում մակեդոնական պատգամաւորութեան դիմումներին: Կարծում են, որ Մակեդոնիայի աւտոնօմիա տալու հարցը չի կարելի բարձրացնել, որովհետև նա կարող է նոր բարդութիւն ստեղծել:

◆ Զենստոխովի վանքում կրօնական թափօրի միջոցին ամբոխի ճնշումից պատահել է 46 դժբաղդ դէպք: Իրարանցման ժամանակ կորել են 19 երեխայ:

◆ Վիէննայի լաւատեղեակ շրջաններում երկիւղ են կրում, որ Բալկանեան թերակղզու վրա կարող են նոր բարդութիւններ ծագել:

◆ Կ. Պոլսում մի շարք խուզարկութիւններ են կատարվել սիօնիզմին մօտ եղող անձանց շրջանում:

◆ Բատկօ Դմիտրիէվին Պետերբուրգի դեսպան նշանակելը բացատրվում է նրանով, որ ուզում են նրան հեռացնել Բուլղարիայից իր ռուսասիրութեան համար:

◆ Հարաւային Աֆրիկայի Իօհաննէսբուրգ քաղաքից հաղորդում են, որ բուրերի ազգային կուսակցութեան մէջ սկսված պառակտումը սուր կերպարանք է ստանում: Գերցօգի կուսակիցները եռանդուն ագիտացիա են մղում Լիւդվիկ Բօթայի և նրա քաղաքականութեան դէմ. նրանք սպառնում են դիմել բռնի միջոցների, եթէ Բօթան հրաժարական չը տայ: Կարող է ապստամբութիւն բռնկվել, որովհետև Գերցօգի կուսակցութիւնը, որ, իսկապէս, «Կրիւգէրեան» կուսակցութիւնն է, այսինքն հանգուցեալ նախագահ Կրիւգէրի կուսակիցները, չի ուզում որևէ կոմպրոմիսս անել: Վերջին ժամանակներս բուրերը ահագին քանակութեամբ զէնքեր ու ռազմամթերքներ են գնում:

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

21 օգոստոսի

ՎԻԷՆՆԱ: «Նէյէ-Ֆրէյէ—Պրէսսէն» հաղորդում է, որ Բօլգարիան բանակցութիւն է սկսել աւստրօ-ունգարական բանկերի հետ՝ ի հաշիւ փոխառութեան, 300 միլիօն ֆրակ ստանալու համար: Լրագիրը իբրև լուր հաղորդում է, որ բանակցութիւն է սկսված Աւստրիայում նաև 1,200,000 ֆունտ չինական փոխառութեան համար: Փոխառութեան մեծ մասը յատկացվում է երեք յածանաւ անելու:

ՎԻԷՆՆԱ: Երեկոյեան բացվեց սիօնիստների համագումարը:

Չինական կառավարութեանը 6%-ով տրվում է 1,200,000 ֆունտ ստերլինգ փոխառութիւն 4 տարի ժամանակամիջոցով:

ՏՕԿԻՕ: Դադրեցրած է «Տէյօ» թերթի հրատարակութիւնը, որը վէպի ձևով տպագրել էր մահվան պատժի ենթարկված անիշխանական Կատօկի դատաստանական գործի նկարագրութիւնը:

ԲԻԳԱ: Նահանգական դատարանը քաղաքային վարչութեան առևտրական յանձնաժողովի հաշւապահ Գուզէին, որը վատնել 40,000 րուբլի, դատապարտեց 2 տարի և 8 ամսվայ կալանաւորական բաժանմունքների:

ՆԱՆՍԻ: Եկաւ գեներալ Դանիլօվը 11-րդ դեվիզիայի ռազմախաղերին ներկայ լինելու համար:

ԽԵՐՍՕՆ: Շաբթվայ ընթացքում խոլերայից հիւանդացել են 4 հոգի, երեքը մեռել են:

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ: Այստեղ եկող բօլգարական նաւերի զօրամասը գնաց ծովը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հաստատված է Միջին Կովկասեան երկաթուղու՝ Կախէթիայի երկաթուղու Ցնօրիսծխալի կայարանից մինչև Բագու գիծ անցկացնող ընկերութեան կանօնադրութիւնը:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

### ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.: **Փօստաւոր գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.: Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.:

ԲԱԹՈՒՄ.—**Փօստաւոր գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.: **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Փօստաւոր գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12 ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երեւան 1 ժ. 33 ր. ցեր.: **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. ր.50 ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.:

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.: **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.:

### ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Փօստաւոր գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.: **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.:

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Փօստաւոր գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.: **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.: **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Փօստաւոր գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.:

ԲՕՐԺՕՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.: **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓՈՐՁՎԱԾ

**Ուսուցիչ-խմբապետ**

Պաշտօն է որոնում:

Դիմել՝ г. Георгіевскъ (Терской Обл.), Армянскому регенту.

(ա.օ.) 675. 6—1

---

Մի պատուաւոր ընտանիքում
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ

**Պատանի աշակերտներ**

(10—15 տարեկան)

Շատ ձեռնտու պայմաններով:

Դիմել՝ Норашенская ул., № 8, кв. М. Баджіевой.

(ա.օ.) 676. 3—1

---

**Շիվենանց**

«Գ. Ի. ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆԻ»
դպրոցի համար հարկաւոր է հայկական առարկաների համար փորձված

**Ուսուցիչ**

լաւ պայմաններով: Դիմել Կ. Հ. Բ. Ընկ. գրասենեակը՝ մինչև ամսիս 25-ը առաւօտ. ժամը 8—1-ը և երեկ. 6—8-ը:

(ա.օ.) 677. 2—1

---

**ԳԱՆՁԱԿԻ** Ս. Լուսաւորիչ եկեղեցական - ծխական երկսեռ դպրոցի համար հարկաւոր են ձեմարանաւարտ մի փորձված **ՏԵՍՈՒՉ** և **երկու ուսուցիչ** թեմականաւարտ. մէկը հայոց լեզուի, պատմութեան, հայրենագիտութեան և աշխարհագրութեան միւսը՝ երգեցողութեան, ձայնագրութեան. երկրաչափական ձեռագիտութեան, կրօնի և խմբապետութեան համար, որը կարողանայ կազմել քառաձայն երգեցիկ խումբ: Պայմանների մասին դիմել հոգաբարձութեան՝ Елисаветполь, Попечительству школы «Сурбъ-Лусаворичъ».

(ա.օ.) 681. 3—1

---

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

**Նիկ. Աբրահամեանի**

հետեւեալ հրատարակութիւնները.

I

**ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ**

երկաթ., կօլօնիալ, բակալ. և բամբակէ ապրանքների (առաջին անգամ է, որ լոյս է տեսնում հայերէն լեզուով), գինն է 2 ռուբ.:

II

**Руководство торг. бухгалтеріи**

въ связи съ керосинозав. производствомъ (2 допол. и исправл. изд.) Ц. 2 р. 50 к.

III

**Таблица вычисл. процентовъ**

отъ 1 до 360 дн. отъ 1/4 до 12% и на всѣ капиталы отъ 1 до 10,000 р. (2 изд.) Ц. 85 к.

IV

**Журнальныя статьи**

для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.

V

**Общедоступная справочн. книжка**

для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ и занимающихся конторскими дѣлами. Ц. 30 к.

Հեղինակի մօտ՝ Бухг. курсы Н. В. Абраамяна, Николаевская, 22 և գրավաճառանոցներում:

(Ե.Ա.Կ.) 680. 20—1

---

**„Մշակի" խմբագրատանը**
**վաճառվում են**
ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1) Հասարակութեան Նեցուկները, Հ. Իբսէնի, Թարգ. Լ. Բաբայեանի 50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ.-էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Բ-ի 40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի . . . 60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի . . . 50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Աւ. Առաքելեանի . . . 50 կ.
6) Մազդա, դրամա, 5 գործ. Լևոն Մանուէլեանի . . . 40 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա: Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%.

Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ", Тифлисъ.

(4) 10—8

---

Ս.-Պետերբուրգի Պետական Կօնսերվատօրիայի գեղարուեստական (պրօֆէսօրների) խորհուրդը 1912 թւի սեպտեմբերի 21-ի նիստում գրուատել է մեր նոր լոյս տեսած

**ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ**

իբրև ՕԳՏԱԿԱՐ ԴԱՍԱԳԻՐՔ փոքր ու միջին հասակաւոր սաներին երգեցողութիւն դասաւանդելու. Ծախվում է բոլոր հայ գրախանութներում:

ԳԻՆՆ Է 35 ԿՕՊԷԿ:

Ռոմանոս Մելիքեան
Ազատ Մանուկեան

659: 8—3

---

Լոյս տեսաւ և վաճառվում է

**ԱՐՇԱԿ ՔԱՀ. ՄԻՆԱՍԵԱՆԻ**

կազմած՝

**ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ**

դասագիրքը
Թեմական և միջնակարգ դպրոցների երրորդ դասարանների համար:

Գինն է 40 կօպ.

Գումարով գնողներին 20% զեղչ.

Պահեստը գտնվում է կազմողի մօտ՝ Шелковниковская ул. № 8.

(23,25,27,29) 672. 4—1

---

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

**ՈՍԿԻ ԲԱՐԵԿԱՄ**

**ՀԱՅ ԸՆՏԱՆԵԱՑ**

Չորրորդ տպագրութիւնը — էջ 1414. պատկերներ 334. բովանդակութիւնը հարստացրած է աստղաբաշխական, բազմակերպ գուշակողական, երկրագործական, աննւթական, երազագիտական, հիպնոտիզմական, տոմարական, փիլիսոփայական, աստուածաբանական, պատմական, ժամանակագրական, տեղակագրական, բարեկարգչական, իմաստասիրական, ղուրանական, մեղուաբուծական, շերամապահական, տարրաբանական, հանքաբանական, արհեստաբանական, առողջապահական, բժշկական, անասնաբուժական, մեկնաբանական, զուարճաբանական հետաքրքրական, գինւորագրական, ժառանգական, աշխարհակագրական, ծննդաբերական, և այլ և այլ բազմաթիւ և ընտիր և շատ պէտքական նիւթերով. այլ և վիճակարկութեան աղեղարքի եւ ռամ ձգելու գիտութիւններով և էսպերանտոյի քերականութեամբ:

ԳԻՆԸ 5 ՌՈՒԲԼԻ

Ճանապարհածախսով 6 րուբլի. զիջումն միմիայն գումարով գնողներին. չի ուղարկվում վերադիր վճարողներին:

Հասցէս Թիֆլիս՝ «Գրիգոր ա.-ք. Մանդակունի»:

(ու. կ.) 658. 3—2

---

**ԹԷՕԴՕՍԻԱՅԻ** հայոց ծխ. միդասեան երկսեռ դպրոցի համար (չորս բաժանմունք երկու սենեակներում) հարկաւոր է ՃԵՄԱՐԱՆԱՒԱՐՏ կամ ԹԵՄԱԿԱՆԱՒԱՐՏ փորձված **ուսուցիչ** հայոց լեզուի, երգեցողութեան և վայելչագրութեան դասերի ու եկեղեցական խմբապետութեան համար, որը միևնոյն ժամանակ և հսկելու է աշակերտների կարգապահութեան:

Տարեկան ռոճիկ 720 րուբլի: Ցանկացողները թող ներկայացնեն իրանց կրթական և ծառայած հաստատութեան վկայականները հետևեալ հասցէով՝ Ѳеодося, Таврич. губ., приход. свящ. Варданянцу.

(ա. օ.) 667. 5—2

---

**ԱՍԽԱԲԱԴԻ** հայոց դպրոցի հոգաբարձութիւնը հրաւիրում է մի **աւագ-ուսուցիչ** փորձառու մանկավարժ՝ հայերէնի 20 դասով: Ռոճիկը 900 ր. Մի **ուսուցիչ** ռուսերէնի համար, ցանկալի է ուսուցչ. ինստիտուտ աւարտած 24 դաս. մի **ուսուցիչ** թւաբանութեան 18 և երկրաչափութեան 6 դաս. մի **ուսուցիչ** կրօնի, նկարչութեան, հայերէնի, վայելչագրութեան համար 20 դաս: Դասագինն է բոլորին 30 ր.: Բացի դրանից հրաւիրվում մի **ուսուցիչ** եւ երգեցողութեան 8 դասի համար վերջինս պատրաստելու է նաև երգեցիկ խումբ եկեղեցում երգելու համար և վարելու է վերակացուի պաշտօն. ռոճիկը 720 րուբլի:

Ցէնզային տեղեկութիւնները հաղորդել հեռագրով:

662. 3—3

---

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ

**ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ**

(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր և այլն:

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և լեռնականների բարբառով. Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգրիտ և չափաւոր գներով: Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով:

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել:

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ:

Տելեֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный